AZG NEW PDF.qxd 1/19/2010 11:30 PM Page 1

Azg Ազգ

20 ՅՈՒՆՈՒԱՐ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 7 (4388)

ISSN: 1829-1651

Թուրքիայում խոզի գրիպից մահացել է 600 հոգի

Ըստ News.am-ի՝ խոզի գրիպի՝ A/H1N1-ի զոհերի թիվը Թուրքիայում հասել է 600-ի: Նման տվյալներ է հունվարի 19-ին տարածել Թուրքիայի առողջապահության նախարարությունը:

Ինչպես հաղորդել է գերատեսչության ղեկավար Ռեջեփ Ակդաղը, վերջին շրջանում համաճարակից Թուրքիայում մահացությունը նվազել է:

Ավելի վաղ Թուրքիայի իշխանությունները հաղորդագրություն էին տարածել, որ առողջապահության նախարարությունն առանց անհրաժեշտության խոզագրիպի զոհերի մասին տեղեկություններ չի հաղորդելու:

Անցած տարվա հունվարի վերջին հաղորդվում էր 400 զոհերի մասին:

Ն. Մ.

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Դիվանագիտական կրակոցներ

Նախորդ օրը ուշ գիշերին հրապարակվեց Թուրքիայի արտգործնախարարության մամլո հաղորդագրությունը ՀՀ Սահմանադրական դատարանի Հայաստան-Թուրքիա Արձանագրությունների սահմանադրականության մասին հունվարի 12-ի որոշման վերաբերյալ (տես՝ այս էջում): Ավելի ճիշտ՝ ոչ թե բուն որոշման, այլ 8 էջանոց փաստաթղթի առաջին 7 էջի վերաբերյալ, որոնցում մեր Սահմանադրական դատարանը, իր սովորության համաձայն՝ երկարապատում շարադրել էր Արձանագրությունների իր ուսումնասիրության արդյունքները՝ մեկնաբանություններով, միջազգային իրավունքին ու հայկական օրենքներին հղումներով հագեցած: Մասնավորապես նկատի ունեմ այդ 7 էջերում ՀՀ սահմանադրության նախաբանի դրույթներն ու Հռչակագրի 11-դ կետի հիշեցումը, ինչպես նաեւ սահմանակետերի բնականոն գործունեությանն առնչվող հատվածները:

Կարելի է ենթադրել, որ հենց այդ հոդվածներն են, որ առիթ են տվել Թուրքիայի արտգործնախարարությանը ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը որակելու իբրեւ «նախապայմաններ եւ սահմանափակող կետեր պարունակող» եւ ընդգծելու, որ «այս մոտեցումը չի կարող ընդունվել» իրենց կողմից, քանի որ դրանք «չեն համապատասխանում Արձանագրությունների ոգուն եւ տառին»:

Ի՞նչ է հետաքրքրում Անկարան այս հայտարարությամբ: Առաջին տպավորությամբ իսկ՝ գործընթացի ձգձգման եւ իր նախապայմանների պարտադրման առիթ տալ ինքն իրեն: Նույնիսկ Սահմանադրական դատարանի որոշումից 6 օր հետո միայն արձագանքելն ապացուցում է դա: Նախապայմաններ տեսնելով այնտեղ, որտեղ ընդամենը նախահիշեցումներ կան, այն էլ միայն սեփական օրենքների եւ միջազգային իրավունքի նորմերի վկայակոչումով, Թուրքիայի արտգործնախարարությունը, փաստորեն, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացմամբ շահագրգիռ երրորդ կողմերին հայտ է ներկայացնում «խամաստային» դիվանագիտական պայքարի անցնելու իր մտադրության մասին, այդ պայքարում փորձելով հասնել իր ձգձգման քաղաքականության արդարացմանը՝ սպասելով բեկումնային շահարկումներ այլ ոլորտներում:

Այնինչ, մամլո հաղորդագրության ավարտին միջազգային հանձնառություններին իր կառչածությունը վկայակոչելու եւ «Հայաստանի կառավարությունից միեւնույն հավատարմությունը ակնկալելու» փոխարեն, Անկարան պետք է ընդունեն, որ ՀՀ Սահմանադրական դատարանի հունվարի 12-ի որոշումը դուռը լայն բացում է ՀՀ Ազգային ժողովում Արձանագրությունների վերջնական վավերացման համար: Մնացյալը ժամանցառություն է՝ հոգուս սեփական շահագրգռությունների:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

Երեք տարի առաջ սպանվեց Հրանտ Դինքը

Հրանտ Դինքի սպանությունից երեք տարի անց ոճրագործները դեռ պատժված չեն, իսկ դատավարությունն անվերջ ձգձգվում է: Եվ թեպետ մշտապես հունվարի 19-ին՝ Հրանտ Դինքի սպանության օրը, «Ակոսի» խմբագրատան առջեւ կազմակերպվում են բողոքի ցույցեր, իսկ հերթական դատական նիստն ուղեկցվում է երթերով, թուրքական «արդարադատությունը» չի շտապում որոշում կայացնել:

ՖՈՏՈ ՈՒԵ

2007 թվականին օրը ցերեկով «Ակոսի» խմբագրատան առջեւ սպանվեց Հրանտ Դինքը: 32 ժամ անց ձերբակալվեց Օգյուն Սամասը, որն ընդամենը 17 տարեկան էր: Վերջինս խստովանեց, որ Հրանտ Դինքի հոդվածներից վրդովված Տրապիզոնից Սամբուլ էր եկել լրագրողին սպանելու հսկայական մտադրությամբ: Սակայն առաջին իսկ դատավարության ընթացքում Օգյուն Սամասը հրաժարվել էր պատասխանել հարցերին: Ձերբակալությունից անմիջապես հետո թուրքական եւ միջազգային մամուլում հայտնվեց մի լուսանկար, ուր ոստիկանության աշխատակիցները լուսանկարվել էին Օգյուն Սամասի հետ՝ թուրքական դրոշի ֆոնին:

Սպանության գործով փաստաբան Ֆեսիե Չենքինը հայտարարեց, որ սպանությունը կազմակերպված եւ հրահրված էր թուրքական կառավարության կողմից ազգայնական հողի վրա: Իր վերջին հոդվածում Հրանտ Դինքը գրում է. «Համակարգիչս լի է սպառնալիքներով եւ վիրավորանքներով: Ես չգիտեմ, թե որքանով իրական են այդ սպառնալիքները, սակայն անհնարին է աղրել՝ կրելով հոգեբանական այս տանջանքները»: Թուրքական կառավարությունը լրագրողի պաշտպանության համար որեւէ քայլ չձեռնարկեց:

Հրանտ Դինքի սպանության մասին խոսեց ողջ քաղաքակիրթ աշխարհը: Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը սիրողված էր մի քանի անգամ ասուլիս հրավիրել եւ սպանությունն անվանել ամոթալի: 2007-ին Եվրոմիության գլխավոր քարտուղար **Խավիեր Սոլանան** նշեց, որ Հրանտ Դինքի սպանությունը դժվարացնում է Թուրքիայի անդամակցության հնարավորությունը Եվրոմիությանը:

Տես էջ 2

Թուրքիան քննադատում է ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը

Թուրքիայի արտաքին գործերի նախարարության երկուշաբթի օրվա տարածած հաղորդագրության համաձայն՝ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ ընդունած փաստաթուղթը «հակասում է բուն արձանագրությունների ոգուն եւ տառին եւ խարխլում է ողջ բանակցային գործընթացը»: «Հայաստանի ՍԴ-ի ընդունած փաստաթուղթը խոչընդոտում է Արձանագրություններով ուղենշված նպատակների իրականացմանը եւ առհասարակ հակասում է Արձանագրությունների իմաստին», նշված է հաղորդագրության մեջ: Միեւնույն ժամանակ Թուրքիան եւս մեկ անգամ փաստում է, որ Անկարան հավատարիմ է միջազգայնորեն իր ստանձնած պարտականությունների կատարմանը, որոնք հայ-թուրքական ստորագրված Արձանագրությունների դրույթներն են: «Նույնը մենք ակնկալում ենք նաեւ Հայաստանից», ասված է թուրքական ԱԳՆ-ի հայտարարության մեջ:

Իհարկե, Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը «մոռացել» է նշել, որ Արձանագրությունների, դրանց ստորագրման համար տարվող բանակցությունների ողջ իմաստն ու բուն նպատակները խարխլվում են հենց Անկարայի մեղքով: Ո՞վ է անընդհատ խոսում նախապայմանների մասին, ո՞վ է, ի վերջո, ձգձգում արձանագրությունների վավերացումը: Թուրքիայում թերեւս սովորել են արդեն մեղավորների անուններ չտալ:

Էդվարդ Նալբանդյանը տարակուսած է Թուրքիայի ԱԳՆ-ի հայտարարությունից

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը մտադիր է կապվել իր թուրք գործընկերոջ՝ Ահմեդ Դավութօղլուի հետ՝ իր տարակուսանքը հայտնելու եւ պարզելու, թե ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման մեջ թուրքական կողմը որտե՞ղ է տեսել նախապայմաններ եւ ինչո՞վ է այն հակասում Արձանագրությունների հիմնարար նպատակին:

Մեկնաբանելով Թուրքիայի ԱԳՆ-ի հունվարի 19-ին տարածած այն հայտարարությունը, որ հայ-թուրքական Արձանագրությունների վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի 2010-ի հունվարի 12-ի որոշումը պարունակում է նախապայմաններ, որոնք «հակասում են Արձանագրությունների «հիմնարար նպատակներին», Հայաստանի ԱԳՆ-ի ղեկավարն ասել է. «Հուսով եմ, որ նման հայտարարությամբ թուրքական կողմը չի փորձում արդարացնել իր կողմից նախապայմաններ առաջադրելու շարունակական փորձերը եւ ողողակել Արձանագրությունների վավերացման գործընթացի անհարկի ձգձգումը»:

Ն. Մ.

Արմեն Մարտիրոսյան. Դիմակայել մարտահրավերներին՝ մրցունակ տնտեսություն կառուցելով

Հոկտեմբերի 29-ին ԳԴՀ-ում ՀՀ 4-րդ դեսպան Արմեն Մարտիրոսյանն իր հավատարմագիրը հանձնեց ԳԴՀ նախագահ Հորսթ Քյոհլերին: Հոկտեմբերի 23-ին էլ նրա պատշտոնակից ԳԴՀ դեսպան Հանս-Յոխեն Շմիդտը Երեւանում ստանձնեց լիազորությունները: Աշխույժ ու հմայիչ կին նախորդներին՝ Կարինե Ղազինյանին ու Անդրեա Վիկտորինին ինչպիսի՞ «այլընտրանք» են ներկայացնելու տղամարդ դիվանագետները: «Իմ մասով կասեմ, որ հմայքի պակասը կլրացնեմ ակտիվ գործունեությամբ», ասաց Արմեն Մարտիրոսյանը, ով, ասում են, հետամուտ է խոստումներն իրականացնելուն: Պարոն Շմիդտին մեր հարցն ուղղելու առիթը դեռ կունենանք, իսկ հիմա «Ազգի» հյուրասիրությամբ ուշադիր լինենք Բեռլինում պատշտոնավարող մեր երկրի բարձրաստիճան դիվանագետին:

- Դժվա՞ր էր թողնել Նյու Յորքը, ՄԱԿ-ի ամբիոնը ու հաստատվել Բեռլինում:

- Ինչ խոսք, քաղաքները եւ աշխատանքի բնույթը բավականին տարբեր են: ՄԱԿ-ում ընթանում է մշտական մի գործընթաց, որին ստիպված ներգրավվում ես՝ շատ հաճախ անկախ քո կամքից կամ ծրագրերից: Այստեղ մի փոքր այլ է. ինքդ պետք է շունչ հաղորդես հարաբերություններին, որպեսզի առավելագույնս արդյունավետ փոխշահավետ երկկողմ համագործակցության զարգացումը: Կարծում եմ, որ երկկողմ դիվանագիտությունը, ի տարբերություն բազմակողմ դիվանագիտության, թեեւ ընդգրկում է հարցերի ավելի նեղ շրջանակ, սակայն պահանջում է ավելի մանրակրկիտ մոտեցումներ: Երկկողմ եւ բազմակողմ հարաբերությունները՝ միմյանց լրացնելով՝ ձեւավորում են երկրի արտաքին քաղաքականությունը: Ինչ վերաբերում է քաղաքներին, կարող եմ ասել, որ Բեռլինը՝ իր կանաչ գոտիներով, հարուստ մշակութային կյանքով, բազմաթիվ պատմական կառույցներով եւ չծանրաբեռնված քաղաքային երթեւեկությամբ, գրավում է յուրաքանչյուր մարդու:

Տես էջ 4

Ադրբեջանում Ռուսաստանի դեսպանը վթարի է ենթարկվել

Ըստ Panorama.am կայքէջի՝ Բաքվում վթարի է ենթարկվել Ադրբեջանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Վլադիմիր Դորոխինը: Պատահարը նախօրեին տեղի է ունեցել Բաքվի ֆաթալի խանախոյսի փողոցում: Բաքվի բնակիչ Էլնուր Աբդուլլաեւն անձնական օգտագործման «ՎԱԶ-2107» մակնիշի մեքենայով բախվել է ՌԴ դեսպանի «Մերսեդես» ավտոմեքենային:

Պատահարի ժամանակ Վլադիմիր Դորոխինը եղել է մեքենայում, սակայն նա լուրջ վնասվածքներ չի ստացել: Լուրջ վնաս է հասցվել սպասարկող մեքենային: Պատահարի պատճառները դեռեւս անհայտ են: Վ. Դորոխինի անունը հիշատակվել է վերջերս, երբ ANSտ լրատվական գործակալությանը հարցազրույց տալով ընդգծել էր, թե Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ Ցյուրիխում ստորագրված արձանագրությունները կապված չեն Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հետ:

Ն. Մ.

AZG NEW PDF.qxd 1/19/2010 11:25 PM Page 1

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Ապրիլի 30-ին իր տան շամուտֆում դաժան ծեծի ենթարկվեց Armenia Today լրատվական գործակալության համակարգող Արգիշտի Կիվիրյանը: Անհայտ անձինք փայտե մահակներով հարձակվեցին, երբ լրագրողը տուն էր վերադառնում: Կիվիրյանը ծանր վիճակում, գլխի եւ մարմնի բազմաթիվ վնասվածքներով, տեղափոխվեց «Էրեբունի» բժշկական կենտրոն: 11 հասարակական կազմակերպություններ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ու միջազգային կառույցները դատապարտեցին միջադեպը: Հետագայում հանցագործություն կատարելու կասկածանքով երկու անձանց նկատմամբ իբրեւ խափանման միջոց ընտրվեց կալանքը. նրանց մեղադրանք ներկայացվեց Կիվիրյանի սպանության փորձի համար:

Սրանք նախորդ տարվա լրագրողների նկատմամբ բռնության ամենացայտուն միջադեպերն էին: Այս ու էլի մի շարք ծեծերի, բռնությունների, ահազանգերի համար նախորդ տարի Հայաստանը «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության հրապարակած ԶԼՄ-ների ազատության վարկանիշային աղյուսակում զբաղեցրեց 111-րդ հորիզոնականը (հետազոտությունն անցկացվել է 175 երկրում): Լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնությունների վերաբերյալ «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի» հրապարակած տարեկան զեկույցի համաձայն՝ 2008-ի համեմատությամբ լրատվամիջոցների նկատմամբ համեմատաբար քիչ խախտումներ են արձանագրվել:

Խորդ տարիներից լրագրողների նկատմամբ մի շարք բռնություններ, լրատվամիջոցների նկատմամբ խոչընդոտներն այս տարի էլ իրենց լուծումը չգտան: Մասնավորապես «Հետք» էլեկտրոնային պարբերականի խմբագիր էդիկ Բաղդասարյանը 2008-ին ենթարկվել էր ֆիզիկական բռնության: «2009-ին հանցագործության մեջ մեղադրվող Կարեն Հարությունյանին դատապարտեցին 5 տարվա ազատազրկման, թեպետ Բաղդասարյանը պնդում էր, որ Հարությունյանը որեւէ մեղք չունի եւ իրական մեղավորներն ազատության մեջ են: Լուծում չեն տանում ԳԱԼԱ եւ Ա1+ հեռուստաընկերությունների հարցերը»: Հարությունյանը նկատում է, որ լրագրողների աշխատանքների նկատմամբ խոչընդոտ կարելի է համարել նաեւ Ազգային ժողովում

Խոսում են լրագրողի իրավունքների մասին, մոռանում՝ պարտականությունները

Բռնության ենթարկված լրագրողների թիվը կրճատվել է

Մայիսի 6-ի երեկոյան բռնության ենթարկվեց «Շանթ» հեռուստաընկերության մեկնաբան Նվեր Մնացականյանը: Անհայտ անձինք հարձակվել էին, ծեծել ու փախել: Մարմնական վնասվածք ստացած Մնացականյանը հայտարարեց, որ միջադեպն առնչություն ունի իր մասնագիտական գործունեության հետ: Նա կատարվածի համար մեղադրեց «Գրանդ Քենդի» ընկերության սեփականատեր Հրանտ Վարդանյանի որդուն: Ավելի ուշ ՀՀ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը հայտնեց, որ լրագրողը սխալմամբ է տուժել: Ըստ նրա՝ Նվերին շփոթել են, իսկ միջադեպին Վարդանյանների ընտանիքը որեւէ առնչություն չունի: Բայց դա Մնացականյանին չբավարարեց. նա շարունակեց պնդել, որ մեղավորը Վարդանյաններն են»:

Մարտի 13. Երեւանի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում ծեծի ենթարկվեց «Առավոտ» եւ «Չորրորդ իշխանություն» օրաթերթերի լրագրող Գագիկ Շամշյանը: Վերջինիս ծեծել էին համալսարանի անվտանգության աշխատակիցները. Շամշյանը հայտնվեց «Նաիրի» բժշկական կենտրոնում:

Եթե 2008-ին գրանցվել էր լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության 28 դեպք, ապա 2009-ին՝ 11, ԶԼՄ-ների եւ դրանց աշխատակիցների վրա ճնշումների 14 (2008-ին՝ 16), իսկ տեղեկատվություն ստանալու եւ տարածելու իրավունքի 13 խախտում՝ նախորդ տարվա 14-ի փոխարեն: «Բայց դա չի նշանակում, որ մտահոգվելու առիթներ չկան: Իրավիճակն ու ընդհանուր միտումները տագնապալի են: Սրանք բացարձակ ճշգրտություններ չեն: Համոզված ենք, որ թիվն ավելի մեծ է: Լրագրողները հաճախ չեն ուզում բարձրաձայնել, անտեսում են, հաճախ ենթարկվում, երբեմն իրենց ուժերով խնդիրը կարգավորում: Լրագրողների նկատմամբ հիմնական բռնությունները կիրառվել են մայիսի 31-ին՝ Երեւանի քաղաքապետի ընտրությունների ժամանակ: Դա արդեն դառնում է օրինաչափություն, երբ ընտրությունների ժամանակ լրագրողների աշխատանքին խոչընդոտում են», ասում է «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի» ղեկավար **Ացոն Մելիքյանը**:

Փորձագետ **Մերուժ Հարությունյանը** պատմում է, որ դեռեւս նախորդ տարվանից լրագրողների հավատարմագրման եւ պայմանների նոր ձեւը:

Հարությունյանը քննված գրքնություն որակեց «Չորրորդ իշխանություն» թերթի հետ կապված միջադեպը, որի արդյունքում սկսեց հրատարակվել «Չորրորդ ինքնիշխանություն» անվամբ:

Տարին առաջ էր նաեւ դատական հայցերով: Փորձագետը մասնավորապես առանձնացրեց Քոչարյանների ընտանիքի հայցն ընդդեմ «Հայկական ժամանակ» օրաթերթի՝ «Ռոբերտիչի արկածները Դուբայում» հրապարկման համար: Թերթի տեղեկություններով՝ ՀՀ նախկին նախագահի կրտսեր որդուն Դուբայում ձերբակալել են: Հայցվորը պահանջել էր հերքել իր պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները եւ հատուցել իրեն հասցված նյութական եւ բարոյական վնասը՝ 16 մլն 120 հազ. դրամի չափով:

Խոսելով լրագրողների իրավունքների մասին՝ փորձագետները, ցավոք, չանդրադարձան լրագրողների պարտականություններին, պատասխանատվություններին, որոնք 2009-ին շատերն էին խախտել: **«Ազգի»** հարցին երկու բանախոսներն էլ ոչ լիարժեք եւ թեմային չվերաբերող պատասխաններ տվեցին, մինչդեռ եթե խոսում ենք մամուլի ազատության, բարգավաճման, զարգացման, եւ ինչպես շատերն են սիրում ասել՝ եվրոպական արժեքների մասին, ապա պետք է հաշվի առնել նաեւ մամուլի որակը, մատնացույց անել ճեղքերը, խոսել քաղաքական գործիչների մոնտաժված, մերկ լուսանկարների, մարդու գլխով ու ավանակի մարմնով լուսանկարների, փողոցային գռեհիկ ոճով հոդվածների ու կաշառվելու մասին: Սակայն, բանախոսներն ասացին, որ հավաքվել են ուրիշ թեմայի համար...

ՀԱՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄ

Բաքու, 1990, հունվար. սովորական ցեղասպանություն

Բաքվի հայկական կոտորածների 20-րդ տարելիցին նվիրված գիտաժողովի ընթացքում երեկ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Բաքու, 1990, հունվար. սովորական ցեղասպանություն» ֆիլմի շնորհանդեսը: Ռեժիսոր Մարիաննա Գրիգորյանը խոստովանում է, որ արխիվներն ուսումնասիրելիս եղել են պահեր, երբ չի դիմացել ընթերցածին ու տեսածին, բարկացել, մի կողմ է նետել նյութերը, աղբել մարդկային գազանությունից, բայց ճշմարտությունը ներկայացնելու, իրականությունը փաստելու համար կրկին շարունակել է աշխատել: Նա նկատում է, որ ադրբեջանահայության դեմ իրագործված ցեղասպանության մասին պետք է հաճախ խոսել, պատմել, ներկայացնել ճշմարտությունը: Անհրաժեշտ է նաեւ պետական մակարդակի աջակցություն, որ, ցավոք, բացակայում է, ի տարբերություն Ադրբեջանի, որտեղ հորինած պատմության համար գրքեր են հրատարակվում, ֆիլմեր նկարահանվում: «Այսօր մեր աչքի առջեւ ագրեսիվ կերպով նենգափոխում են իրականությունը, աշխարհը չգիտի ճշմարտությունը, Ադրբեջանը հրամցնում է լիովին խեղաթյուրված Ղարաբաղի պատմություն, ղարաբաղյան խնդրի էություն»: Ռեժիսորը պատմում է, որ ֆիլմը դժվարությամբ է պատրաստվել, հիմնական խնդիրը տեսանյութերի սակավությունն էր: «Սումգայիթում ադրբեջանցիները թույլ էին տալիս նկարել, իսկ Բաքվում սարսափելի էր, ականատեսները պատմում էին, որ տեսախցիկներն ուղղակի ջարդում էին: Հենց դա է պատճառը, որ կադրերը քիչ են, թեպետ կան հազարավոր վկայություններ: Սա ոչ միայն տուրք է զոհերի հիշատակին, այլեւ հուսով ենք, որ ֆիլմն իր փոքր ներդրումը կունենա հետագա ցեղասպանությունների կանխարգելման գործում»:

Նախատեսված է ֆիլմի թարգմանությունը ռուսերեն եւ անգլերեն:

Սա «Սովորական ցեղասպանություն» ֆիլմաշարի առաջին ֆիլմն է: Մյուսները կպատմեն Սումգայիթի, Մարաղայի իրադարձությունների, «Կոլցո» գործողության մասին:

Հ. Հ.

Երեք տարի առաջ սպանվեց Հրանտ Դինքը

1-ին էջից

Հրանտ Դինքի մահից հետո օրեր շարունակ Ստամբուլի փողոցներում տեղի էին ունենում բազմահազարանոց ցույցեր: «Ես Հրանտ Դինքն եմ», «Մենք հայ ենք» վանկարկում էին հազարավոր թուրքեր: Ստամբուլում հայոց պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը 15-օրյա սուգ հայտարարեց:

CNN Turk- ի խմբագիր Թահա Աքյոլը այդ օրերին ասաց. «Կրակոցը Թուրքիայի դեմ էր: Այժմ աշխարհում կարծիք է ձեւավորվել, թե թուրքահայերը երկրում անվտանգ չեն»:

Հրանտ Դինքը 1996 թվականի ապրիլի 5-ին սկսեց «Ակոսի» հրատարակությունը: «Ակոսը» հիմնականում թուրքերեն շաբաթաթերթ է Թուրքիայում, որը պատմում է թուրքահայ համայնքի եւ հայ թուրքական հարաբերությունների մասին: Հրանտ Դինքը խոսում էր Հայոց ցեղասպանության մասին, երկու ժողովուրդների հարաբերությունների մասին: Հրանտ Դինքին մեղադրում են թքությունը վիրավորելու մեջ եւ մեղադրում տխրահռչակ 301 հոդվածով: Սակայն մեղադրանքներն ու հետաքննություններն անզոր էին դադարեցնելու Հրանտ Դինքի խոսքը: «Երկխոսությունը միակ ելքն է», հայ թուրքական հարաբերությունների մասին խոսելիս ասել էր Հրանտ Դինքը:

Հրանտ Դինքի մահվան երրորդ տարելիցի առիթով «Ակոսի» խմբագրատան առջեւ էին երեկ հավաքվել լրագրողի ընկերները, որոնք նախապես հանդես էին եկել հայտարարությամբ՝ պահանջելով արդար դատավարություն եւ մեկ անգամ եւս հաստատելով իրենց պատրաստակամությունը պայքարելու արդար վճռի համար:

«Ո՞վ է Հրանտի ոճրագործը», հարցնում են Հրանտի ընկերները եւ պատասխանում. «Հրանտը սպանվեց համատեղ գործող «պատշտոնական» կամքի միջոցով, ովքեր համարձակություն չունեն հրապարակավ ներկայանալու»:

ԱՐԵՎԻԿ ԲԱԳԱՅԱՆ

Սպառողական գները 2009-ին աճել են 3,4 տոկոսով

Ըստ ազգային վիճակագրական ծառայության, 2009-ի հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սպառողական գներն աճել են 3,4 տոկոսով: Միաժամանակ, նշվում է, որ պարենային ապրանքների (ներառյալ ծխախոտն ու խմիչքը) գների ինդեքսը կազմել է 99,3 տոկոս: Այսինքն, արձանագրվել է 0,7 տոկոս գնանկում: Ոչ պարենային ապրանքների գների ինդեքսը կազմել է 104,7 տոկոս: Այսինքն, գներն աճել են 4,7 տոկոսով: Ծառայությունների սակագներն ունեցել են ամենամեծ աճը՝ 10,4 տոկոս:

Պարենային ապրանքներից ամենամեծ գնաճը 2009-ի դեկտեմբերին՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է ձկնամթերքի, բանջարեղենի եւ մրգերի ապրանքախմբում: Օրինակ՝ գլուխ սոխի գինը նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ աճել է գրեթե կրկնակի, իսկ ձկնաթերինը՝ 33,7 տոկոսով: Կենդանական եւ բուսական յուղերի ապրանքախմբում արձանագրվել է գնանկում՝ 2,5 տոկոսով: Փոքր գնանկում է արձանագրվել հացամթերքի ապրանքախմբում՝ 2,6 տոկոսով: Անցյալ տարվա դեկտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ նվազել է նաեւ ձվի գինը՝ 12,1 տոկոսով, իսկ մսամթերքի գինը փոքր-ինչ աճել է՝ 3,3 տոկոսով:

Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած մեկ այլ տեղեկատվության համաձայն, 2009-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին գների միջին ամսական հավելաճը կազմել է 0,5 տոկոս, ինչը 0,1 տոկոսով գերազանցել է 2008-ի նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը:

Ինչ վերաբերում է վերջին 4 տարվա ընթացքում արձանագրված գների ինդեքսի փոփոխություններին, ապա 2005-ի համեմատ սպառողական գների աճը կազմել է 25,8 տոկոս, այդ թվում պարենային՝ ապրանքներինը՝ 22,7 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 20,6 տոկոս, իսկ ծառայություններինը՝ 34,2 տոկոս:

Ավելացնենք, որ գների ինդեքսը որոշվում է նկատի ունենալով շուրջ 500 ապրանքների եւ ծառայությունների գների դինամիկան: Հետեւաբար, վերոնշյալ տեղեկատվությանը ծանոթանալիս հարկ է նկատի ունենալ, որ խոսքը գների միջինացված ցուցանիշների մասին է:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԻԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 1/19/2010 10:16 PM Page 1

«Տարբեր գենքերով» երկու հայ, երկուսն էլ՝ խիստ հայրենասեր

Այսօր ԱՍԱԼԱ-ի ստեղծման 35-ամյակն է

Թե ինչու գոյություն ունեն արեւմտահայեր ու արեւելահայեր, բոլորս գիտենք, թե ինչու ունենք ընդարձակ սփյուռք, առավել եւս գիտենք: Գիտենք նաեւ այս «երկու հայերի» առանձնահատկությունների մասին, սակայն մոռանում ենք եւ շատ հաճախ ենք մոռանում, որ երկուսն էլ մի հայրենիք ունեն, երկուսն էլ այդ հայրենիքի հզորությունն ու բարգավաճումն են ուզում, երկուսն էլ, ի վերջո, հայ են՝ հայրենասեր հայ: Հետեւաբար անթույլատրելի է տարբերել նրանց, անիմաստ է կշեռքի վրա դնել նրանց հայրենասիրությունը. միեւնույնն է, կշեռքի նժարները հավասարություն են ցույց տալու:

Հենց այս հայրենասիրությունը կրող հայեր 1975-ի հունվարի 20-ին Բեյրութում ստեղծեցին Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը՝ ԱՍԱԼԱ-ն, որի հիմնադիրներից եւ առաջին ղեկավարներից էր Իրաքի Մոսուլ քաղաքում ծնված Հակոբ Հակոբյանը, որը 22 տարեկանից ղեկավարում էր կառույցը 13 տարիների ընթացքում, մինչեւ այն օրը, երբ 35 տարեկանում նահատակվեց:

Որքա՞ն օրինակներ կան արեւմտահայության եւ արեւելահայության միասնության, համերաշխության, համատեղ պայքարի: Ղարաբաղի պատերազմում քանի՞ արեւմտահայեր էին եկել ու կռվել արեւելահայերի կողքին. կարեւոր չէ: Եվ այսօր, երբ փորձում են որոշել, թե ո՞վ է առավել հայրենասեր, երբ հրապարակ են իջեցնում հային հայից օտարելու վարքագծեր, զգում ենք նույն ԱՍԱԼԱ-ի հրապարակած «Խոհեր»-ի արդիականությունն ու կարեւորությունը:

Երբ Հայաստանը սկսեց հարաբերություններ կարգավորել Թուրքիայի հետ, իսկ Թուրքիան հենց այն երկիրն է, որի պատճառով հենց կան արեւմտահայեր ու արեւելահայեր, այս «երկու հայի» անթույլատրելի տարբերություններն առավել զգացվեցին, երբեմն նույնիսկ արհեստականորեն, որոշ ուժերի ջանքերով: «Շահարկելով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ուղղությամբ ՀՀ քաղաքականությունը՝ Սփյուռքի մեջ լկտիաբար բեմականացվում է «դավաճան» արեւելահայ ու «հայրենասեր» արեւմտահայ բեմադրությունը: Այնինչ անթույլատրելի է Սփյուռքի ավանդական շրջանների տեսակետներն ու դիրքորոշումը «ծուռ հայելիով» ներկայացնելը», ասված է ԱՍԱԼԱ-ի «Խոհեր»-ում:

Հայ գաղտնի բանակը եւ ամբողջ անկեղծ հայրենասեր հայությունը ճանաչում է մեկ Հայաստան եւ մեկ հայություն. «Սակայն հայության յուրաքանչյուր հաշված ունի իր ուրույն «գենը»: Հայաստանի Հանրապետությունը, որն առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանից մինչեւ Սերժ Սարգսյան իրականացնում է արտաքին՝ լրջախոհ ու լայնահորիզոն քաղաքականությունը, չի կարող գործածել այն նույն «գենը», որը գործածվում է արտերկրի հայությունը, եւ հակառակը», ասում է ԱՍԱԼԱ-ն՝ հավելելով, որ մենք պետք է ազգովին տարբերակենք յուրաքանչյուրիս դերն ու տեղը. «Հակառակ պարագայում կարժանանք Հայաստանի առաջին Հանրապետության դժբախտ ճակատագրին», նշված է «Խոհեր»-ում:

Իսկ առհասարակ ի՞նչ է հայրենասիրությունը, ո՞ւմ մենաշնորհն է, եւ պե՞տք է արդյոք, որ լինի մենաշնորհված: Հայրենասիրությունն այն ուժն է, որի շնորհիվ այսօր աշխարհի քարտեզում կա Հայաստան անունը, այնինչ կարող էր չլինել. «Հայրենասիրությունը թերեւս Երեւանի նահանգը պահել-պահպանելու ճակատագրական որոշումներին «Միացյալ Հայաստան» բղավելը չէր, այլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը փաստացի չճանաչելով՝ այն, փաստորեն, Հայաստանի անբաժան մաս պահելու լռակյաց վարքագիծը», շեշտում է ԱՍԱԼԱ-ն: Իսկ եթե որեւէ մեկի մենաշնորհը լիներ, ապա հաստատ չէր լինի ոչ Հայաստան, ոչ հայություն: «Հայրենասիրությունը արեւմտահայերի մենաշնորհը չէ: Արեւելահայը նույնքան հայրենասեր է, որքան արեւմտահայը: Բնականաբար Հայաստանում բնակվող հայը պետք է ավելի իրապաշտորեն շարժվի, մինչդեռ արեւմտահայը շատ հաճախ դատապարտված է լինել փոքր ինչ-զգացմունքային», շարունակում է ԱՍԱԼԱ-ն: Իսկ ինչո՞ւ է արեւմտահայը դատապարտված լինել զգացմունքային, իսկ հայաստանաբնակը՝ իրապաշտ: Թերեւս այն պատճառով, որ Հայաստանից դուրս ապրող հայն ուրիշ երկրի քաղաքացի է, օտար պարտականություններ կրող: Նա չի զգում եւ չի էլ կարող զգալ, թե ինչ խնդիրներ ունի շրջափակված Հայաստանը: Սակայն նա «զգում» է իր նախնիների արյունը՝ 1915-ից ի վեր, եւ դա է նրա համար ամենակարեւորը, առաջնայինը: Իսկ հայաստանաբնակը ապրում է ծանր տնտեսական, սոցիալական պայմաններում, ավելի վաղ՝ նաեւ պատերազմական պայմաններում: Արդարացիորեն՝ նա ուզում է լավ ապրել, ուզում է զարգացած ու բարգավաճ տեսնել մեր ընդհանուր հայրենիքը: Ու հենց այստեղ «երկու հայ»-ը մեկն են դառնում, թեկուզ տարբեր «գենքերով», բայց խիստ հայրենասեր:

Այնպես որ նույնիսկ պետական, քաղաքական առումներով սխալ է որոշ ուժերի կողմից կատարվող «հայերի տարբերակումը», նրանց հայրենասիրության մակարդակների որոշումը: Բոլորս էլ մեր ներդումն ունենք մայր հայրենիքի անկախության մեջ, որը միշտ իր զոհերին է պահանջում, մինչդեռ հայության պառակտման հեղափոխական մտադրությունները կարող են «հայեր ոչնչացնել», քանի որ. «Հեղափոխությունը միշտ էլ «ուտում» է իր զավակներին», եզրափակում է Բեյրութում հրապարակված իր «Խոհեր»-ը ԱՍԱԼԱ-ն:

Հ. Ա.

ԱՍՈՒԼԻՍ

Հայկական դիվանագիտությունը վտանգավոր ձեռքերում է

Հայ-թուրքական հարաբերությունների եւ արձանագրությունների վավերացման մասին երեկ «Փաստարկ» ակումբում խոսեց Հայաստանի Դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Գասպարի Սարգսյանը:

«Այն ամենը, ինչ որ քաղաքական ուժերը, այդ թվում նաեւ ՀԴԿ-ն, նախանշում էին փաստաթղթի թերությունների մասին, Սահմանադրական դատարանը շտկեց եւ սրբագրեց բոլոր այն սխալները, որոնք կատարել էր արտաքին գործերի նախարարությունը: Ի սկզբանե մենք ասում էինք, որ այդ փաստաթղթում ոչ թե ուղղակի սխալներ են, այլ անճշտություններ, ու այդ ձեւակերպումներն անգրագիտության ու կամքի բացակայության նշան են, այսինքն՝ պետության ներկայացուցիչները չկարողացան պաշտպանել պետության շահերը: ՍԴ-ն, ի թիվս մյուս բոլոր սխալների, նշում է, որ այդ 2 արձանագրությունները խոսում են սահմանի բացման պայմանավորվածության մասին, որտեղ հատուկ շեշտվում է, որ Հայաստանն այստեղ մեկ դեռակատարում ունի, որն է՝ սահմանի անցակետերի աշխատանքն անխափան պահպանելն ու աղահովելը, այսինքն՝ սահմանը Թուրքիան է փակել, Թուրքիան էլ պետք է բացի: Այսպիսի նրբությունները պետք է հասկանային դիվանագետներն ու իրենք իրականացնեին», ասում է Արամ Սարգսյանը:

Արձանագրություններում մտցված է եղել երկկողմ պարտավորությունների գաղափարը, որի տակ Թուրքիան հասկանում էր Կարսի պայմանագիրը, իսկ ՍԴ-ն սխիզված եղավ դա սրբագրել՝ ասելով, որ երկկողմ պարտավորություններ անկախ Հայաստանը Թուրքիայի հետ չի ունեցել եւ չունի:

Բանախոսը նշեց, որ մեր դիվանագիտական կորպուսը գտնվել է շատ ցածր մակարդակի վրա, եւ այդպիսի մարդկանց արտաքին քաղաքականություն վարել վստահելը վտանգավոր է պետության եւ ազգի շահերի համար:

«ՍԴ-ն բոլոր հարցերը չի լուծել, ՀԴԿ-ն Ազգային Ժողովի նախագահին վաղուց արդեն ուղարկել է իր դիմում-նամակը, որտեղ մենք առաջարկել ենք վերապահումներով ընդունել այս արձանագրությունները, հիմա, ճիշտ է, հարցն ընկնում է այլ հարթություն, բայց այստեղ կա մի կարեւոր հանգամանք՝ արդյոք ԱԺ-ն, հիմք ընդունելով ՍԴ-ի որոշումը, կկայացնի՞ իր սեփական որոշումը, թե՞ հետ կկանգնի, ու որոշումը հետ կվերադառնա ՍԴ՝ նորից սուգվելու համար: Ինչ վերաբերում է հանրապետության նախագահին, ի տարբերություն նախորդ երկու նախագահների՝ Սերժ Սարգսյանը կարողացավ արտահայտել մի շատ կարեւոր հասկություն՝ նա լսում է, հասկանում է եւ ընդունում է որոշում, այսինքն՝ քաղաքական ուժերի եւ հասարակության ներկայացուցիչների հետ հանդիպումներից նա քաղում է կարեւոր մտքեր ու առաջարկներ, հատկապես սփյուռքի հետ կապված այդ հանդիպումների ժամանակ», նկատում է Արամ Սարգսյանը:

Միջնորդները պետք է փորձեն գտնե բազային սկզբունքներում համաձայնության բերել կողմերին: ՀԴԿ-ն չի ընդունում «մադրիդյան սկզբունքներ» հասկացությունը եւ գտնում է, որ դա պետք էլ չէ քննարկել այնպես, ինչպես, օրինակ, արձանագրությունները:

«Բայց առաջին հերթին հայերս պետք է ազատենք մեզ այն բարդույթից, որ իբր թուրքերն ամենակարող են ու ամենախորամանկը: Թուրքիան իրականում մեզնից շատ ավելի է վախենում, մենք պետք է պաշտպանենք սեփական շահերը՝ չնայած ծանրագույն հանգամանքներին, բանակցությունների արվեստը հենց սեփական դիրքորոշումը պաշտպանելու մեջ է: Թուրքիան, հիմա պատճառաբանելով ե՛ւ Սահմանադրական դատարանի որոշումը, ե՛ւ ղարաբաղյան հիմնահարցի խնդիրները, ձգձգելու է, հնարավոր է՝ նույնիսկ չվավերացնի էլ փաստաթղթերը: Անկեղծ ասած, ես դրանից վատ չեմ զգա, քանի որ մենք պարտավոր ենք պաշտպանել ազգային շահերը», ասում է Արամ Սարգսյանը:

ՀԴԿ-ն, փաստորեն, դեմ չէ արձանագրությունների վավերացմանը, բայց դա չի նշանակում, թե ամեն ինչ գոհացնում է կուսակցությանը: Օրինակ, ԱԺ-ից պահանջելու է եւս մեկ հավաստում, որ արտաքին քաղաքական օրակարգից դուրս չգան, օրինակ, Հայ դատի գաղափարախոսության հետ կապված խնդիրները, եւ ԱԺ-ն պետք է վերահաստատի, որ Հայաստանի քաղաքականությունը շարունակելու է սատարել ցեղասպանության միջազգային ճանաչմանը:

Եվ վերջում բանախոսը կանխատեսեց՝ 2010 թիվը շատ ծանր տարի է լինելու բոլոր տեսանկյուններով էլ, որովհետեւ եթե անգամ արտաքին քաղաքականության հետ կապված որոշ դրական բաներ կարելի է նշել, ապա ներքին խնդիրները մնացել են նույն վիճակում, եթե ոչ՝ ավելի վատ:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Մեր ժամանակների հերոսը»

Նիկոլը ոստիկանին բռնության չի ենթարկել, բայց զանգվածային անկարգություններ է կազմակերպել

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ դատարանի բակը երեկ մարդաշատ էր, այնտեղ էին ՀՀ ԱԺ նախկին նախագահ Բաբկեն Արարքցյանը, Ստեփան Դեմիրճյանը, Լեւոն Զուրաբյանը, Վահագն Խաչատրյանը եւ այլ ընդդիմադիր ընկերներ. դատարանը հրապարակում էր Նիկոլի դատավճիռը: Երբ հայտնի դարձավ, որ «Հայկական ժամանակ»-ի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը դատապարտված է 7 տարվա ազատազրկման, դատարանի բակում հավաքվածները, որոնք մինչ այդ «Նիկոլ» էին գոչում, սկսեցին նոր վանկարկումներ՝ «թուրքեր, թուրքեր»: Ոչինչ, հիմա բավական «նորաձեւ» է հարեւան ժողովրդին «հիշելը» ամենատարբեր առիթներով:

Այսպիսով՝ արմատական ընդդիմության վառ ներկայացուցիչ, երեւանյան գրեթե բոլոր հանրահավաքներում իր ձայնով ներկա Նիկոլ Փաշինյանը դատապարտվեց 7 տարվա ազատազրկման: Դատարանը հանեց քրեական օրենսգրքի 316 հոդվածի առաջին մասով ներկայացված մեղադրանքը (ոստիկանի նկատմամբ բռնություն), սակայն դատապարտեց 225 հոդվածով՝ զանգվածային անկարգությունների կազմակերպում: Ի դեպ, մեղադրող կողմը դատարանից պահանջել էր այս վերջին հոդվածով պատիժ սահմանել 6 տարի, սակայն դատարանը, թերեւս հաշվի առնելով, որ մեղադրյալի վրայից մեկ հոդված հանվել է , Փաշինյանին դատապարտեց 7 տարով: Հիշեցնենք, որ այս հոդվածով նախատեսված պատժի առավելագույն չափը 10 տարին է:

Փաստորեն կարելի է արձանագրել, որ «իշխանափոխության համար բոլոր լծակներն ունեցող» հայրենի ընդդիմությունը չկարողացավ հասնել, իր խոսքերով՝ անմեղ ընկերոջ ազատ արձակմանը:

Այնինչ Փաշինյանը, իր իսկ խոսքերով, «լինելով ՀՀ օրինավոր քաղաքացի, որպես լրագրող, որպես երեք երեխաների հայր» պատրաստ էր «հանուն խոսքի ազատության ամեն ինչի»:

Հիշեցնենք, որ Նիկոլին առաջադրած մեղադրանքներից ոչ մեկը պատշաճող կողմը չէր ընդունում: Նախ՝ ոստիկանի նկատմամբ բռնություն Փաշինյանն իր իսկ ցուցմունքով, չէր կարող անել, քանի որ «կարմիր բերետավորներն իմ ձեռքերը ոլորել էին», նշել էր Փաշինյանը դատական նիստերից մեկի ժամանակ: Եվ հետո, ըստ պատշաճող կողմի, որպեսզի հաստատվի Նիկոլի մեղքը արդեն 225 հոդվածով. «Պետք է նախ ապացուցել, որ այդ օրը տեղի են ունեցել ընդհանրապես անկարգություններ»: Իսկ որպես վկա դատարանում ցուցմունք տված «Հ1»-ի հաղորդավար Արսակ Հերիքյանը, որը հենց մարտի մեկին «Հայլուրն» է վարել, ընդգծել է, նաեւ լրատվության մեջ, որ Մյասնիկյան փողոցում հավաքվածներին Փաշինյանն ու Խաչատուր Սուքիասյանը հանդարտեցման կոչեր են արել: Փաստորեն ստացվում է, որ անկարգություններ եղել են, հակառակ պարագայում ինչո՞ւ հավաքվածները հանդարտեցման կարիք պետք է ունենային:

Սակայն դատական նախավերջին նիստում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Ես այնքան միամիտ չեմ, որ կարծեմ, թե Հայաստանում արդարացման վճիռ կկայացնեն»: Փաշինյանն իր արդարացումն ակնկալում էր ժողովրդից, որը հունվարի 10-ին 10-րդ ընտրատարածքում ընտրությամբ պետք է արտահայտեր այդ արդարացումը: Սակայն հունվարի 10-ի ընտրությունների արդյունքները (լավ թե վատ) արդեն հրապարակված են. ընտրվածը Նիկոլը չէ:

Փաշինյանը նույն այդ նիստում, օգտվելով իր վերջին խոսքի իրավունքից, հայտարարել էր. «Մեր պայքարը անկասելի է, մեր հաղթանակն անխուսափելի է: Պայքար, պայքար մինչեւ վերջ»:

Սակայն Նիկոլի ազատ պայքարը հունվարի 19-ին կասեցվեց. «Հայկական ժամանակ»-ի գլխավոր խմբագիրը 7 տարի հետո միայն կբարունակի այն:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

AZG NEW PDF.qxd 1/19/2010 10:16 PM Page 1

Արմեն Մարտիրոսյան. Դիմակայել մարտահրավերներին՝ մրցունակ տնտեսություն կառուցելով

1-ին էջից

- Արմեն Մարտիրոսյան անունազգանունը «լայն տարածում» ունի. կոմոդոզիտոր, ԱԺ պատգամավոր: Այս զուգադիպումները զավեշտալի պատմություններ չե՞ն ստեղծել:

- Ադրբեջանական որոշ էլեկտրոնային լրատվամիջոցներում վերարտադրելով այս գումարման ԱԺ պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի խոսքերը, տարիներ շարունակ տեղադրում են իմ լուսանկարը: Վերջերս Մյունխենում կայացած Հ�հ եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման ընթացքում նկատեցի, որ երկու նախագահների խոսնակները զրուցում են: Մոտենալով Սամվել Ֆարմանյանին՝ խնդրեցի փոխանցել իր գործընկերոջը, որ ադրբեջանական ԶԼՄ-երը չխառնեն պատգամավոր Ա. Մարտիրոսյանին դեսպան Ա. Մարտիրոսյանի հետ: Խնդրանքս փոխանցվեց, հուսով եմ, որ գոնե այս պարզ հարցում ադրբեջանական լրատվամիջոցները կլինեն ավելի արժանահավաս:

- Ինչպե՞ս է բնորոշում ԳԴՀ-ում Հայաստանի 4-րդ դեսպանը Հայաստան-Գերմանիա 17 տարիների քաղաքական երկխոսության ներկա մակարդակը:

- Այդ ակտիվ երկխոսությունը կրում է մշտական բնույթ, դա թույլ է տվել ապահովել երկկողմ հարաբերությունների ներկա բարձր մակարդակը եւ արդյունավետությունը: Կատարվել է լուրջ աշխատանք, այս կապակցությամբ իմ երախտագիտությունն եմ հայտնում ՀՀ եւ ԳԴՀ բոլոր այն դիվանագետներին, որոնք 1992 թվականից, երբ երկու երկրների միջեւ հաստատվել են դիվանագիտական հարաբերությունները, իրենց եռանդն ու գիտելիքներն են ներդրել այս գործում:

- Պարոն Մարտիրոսյան, Գերմանիան խոշոր ներդրումներ է իրականացրել Հայաստանում, սակայն մասնագետների գնահատմամբ՝ դեռեւս մեծ պոտենցիալ կա տնտեսական կապերը զարգացնելու: Կա՞ն նոր առաջարկներ:

- Ըստ պատշոնական վիճակագրության, ՀՀ-ում գերմանական կապիտալի մասնակցությամբ գրանցված է 66 ձեռնարկություն, որոնց հիմնական մասը ներգրավված է ծառայությունների եւ առեւտրի բնագավառներում, իսկ մոտ 10՝ արտադրության ոլորտում: Ամենախոշորը՝ «Քրոնիմես» ընկերությունը, Հայաստանի հանքային արդյունաբերության ռազմավարական ներդնողն է, որը լուրջ քայլեր է ձեռնարկում ՀՀ-ում նաեւ այլ ժամանակակից արտադրությունների կազմակերպման ուղղությամբ: Սակայն սահմանափակվել դրանով չենք կարող: Գերմանիայի տնտեսությունը՝ լինելով աշխարհի 4-5-երորդը, իր նորարար կարողություններով, կարող է մեծապես նպաստել Հայաստանի տնտեսության արդիացմանը: Հեռանկարներ կան, եւ աշխատանքներ են տարվում ապահովագրական, սննդամթերքի արտահանման, առողջապահության, ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառներում համագործակցություն հաստատելու եւ առկա ներուժը ավելի արդյունավետ օգտագործելու ուղղությամբ: Հայտնի է, որ եվրոպական շուկան իր խիստ պահանջներն է ներկայացնում արտադրողներին ու ներմուծողներին, հետեւաբար, մեր այն գործարարները, որոնք ցանկանում են ամրացնել իրենց դիրքերը գերմանական շուկայում, պետք է լուրջ քայլեր ձեռնարկեն այդ ուղղությամբ: Առանձնահատուկ կցանկանայի նշել այն դերը, որն այս ուղղությամբ կարող է ունենալ Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատը: Փորձելու ենք ակտիվացնել վերջինիս կապերը ԳԴՀ երկրամասերի նույնատիպ կառույցների հետ:

- Գերմանիան մեծ հետաքրքրություն է դրսեւորում «Նաբուկկո» ծրագրի հանդեպ: Ըստ իրազեկ աղբյուրների, դրա լոբբիինգով զբաղվելու հայտ են ներկայացրել նախկին արտգործնախարար Յոշկա Ֆիշերը, կանցլեր Շրյոդերը, նաեւ՝ Բենիտա Ֆերրերո-Վալդները: Ի՞նչ կփոխվի Գերմանիա-Հայաստան հարաբերություններում, եթե ծրագիրն (ի հեծուկս կասկածների) իրականություն դառնա:

- Յուրաքանչյուր երկիր, որը մեծ կախվածություն ունի գազ մատակարարող մեկ այլ երկրից, ձգտում է նվազեցնել կախվածության աստիճանը՝ դիվերսիֆիկացնելով մատակարարողների աշխարհագրությունը: ԳԴՀ-ը, ինչպես գրեթե բոլոր եվրոպական երկրները, նման նախագծերի միջոցով հետապնդում է այդ պարզ նպատակը: (Ի դեպ, նույն խնդիրն էր լուծում Հայաստանը՝ կառուցելով իրանական գազամուղը): Սակայն, եթե անգամ «Նաբուկկո» ծրագրը իրականացվի, ապա դա չի բերի Գերմանիայի հետ մեր երկկողմ հարաբերությունների ուղղակի փոփոխությանը: Այլ բան է, որ մեկ այլ երկիր կամ երկրների խումբ կարող են ավելի լուրջ դերակատարում ստանալ տարածաշրջանում ու նրանից դուրս եւ տնտեսապես օգտվել դրանից: Մեր խնդիրը, անկախ նման աշխարհաքաղաքական նախագծերից, չի փոխվում. Հայաստանը պետք է կառուցի մրցունակ տնտեսություն՝ դիմակայելու մարտահրավերներին:

- ԳԴՀ արտգործնախարարությունը ողջունեց հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումը: 2005-ին Բունդեսթագը ճանաչել էր Հայոց ցեղասպանությունը, հորդորել Թուրքիային վերանայել սեփական պատմությունը, իսկ իր հանցակցության համար ներում հայցել հայ ժողովրդից: Որպես փոխհատուցում Հայաստանը պահանջե՞լ է Գերմանիայից անվտանգության երաշխիքներ: Մանավանդ որ Թուրքիան Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելը, սահմանը բացելը շարունակում է պայմանավորել Ղարաբաղից՝ հայկական զորքի դուրսբերմամբ, իսկ Մյունխենյան հանդիպումից առաջ Ալիեւն էր սպառնում պատերազմով: Գերմանիան միշտ շեշտել է, թե կողմ է ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորմանը, բայց Ալիեւի ռազմաշունչ տեքստը կարծես լուրջ քննադատության չարժանացավ, գերմանական լրատվամիջոցները բավարարվեցին փաստն արձանագրելով:

- Որքան ես գիտեմ, Բունդեսթագի բանաձեւում չի օգտագործվել G-բառը, որն իր մեջ ունի ոչ միայն քաղաքական, այլ նաեւ իրավական կոմպոնենտ՝ դրանից բխող հնարավոր հետեւանքներով: Հետեւաբար, խոսել այսօր որեւիցե փոխհատուցման մասին, իրատեսական չէ: Ինչ վերաբերում է ադրբեջանական կողմի ռազմատենչ հայտարարություններին, ապա վերջերս ունեցած հանդիպումների ժամանակ ես մեր գերմանացի գործընկերներին խնդրեցի, որ իրենք ոչ թե մեզ հետ հանդիպումների ժամանակ, այլ ի լուր միջազգային հանրության հայտնեն իրենց քննադատությունն այդ կապակցությամբ:

- Պարոն Մարտիրոսյան, դեսպանությունն ինչպե՞ս է հակակշռում Եվրոպայում ամենամեծ թուրքական համայնքի առկայությանն ու լոբբիինգին, ադրբեջանական ակտիվ քարոզչամեքենայի գործունեությանը, որի PR-ն ի դեպ կազմակերպում է Մայնի Ֆրանկֆուրտում հայտնի Edelman գործակալությունը: Հենց նրանք էին հոգացել գերմանաադրբեջանական ֆորումի կազմակերպած «Ղարաբաղ. Ադրբեջանի մշակութային որան» կոնֆերանսին բազմաթիվ լրագրողների ներկայությունը, որի արդյունքում ֆորումի աշխատանքներին ակտիվորեն ներգրավված դեսպան Փարվիզ Շահբասովը գոհ էր մնացել:

- Այս երկրում մեծ թուրքական համայնքի առկայությունն իրականություն է, եւ դա ունի իր նախապատմությունը: Սակայն ուշադրության արժանի է ոչ թե թուրքական համայնքի թվական, այլ որակական բնութագիրը: Ազգությամբ թուրք ԳԴՀ քաղաքացիները կարողացել են ոչ միայն բավականին հաջող ինտեգրվել գերմանական հասարակության մեջ, այլ նաեւ ակտիվ մտնել երկրի մեծ քաղաքականություն՝ գրավելով այնտեղ բավականին ազդեցիկ դիրքեր: Դրա վկայությունն է այն փաստը, որ վերջին խորհրդարանական ընտրություններով Բունդեսթագում 5 պատգամավոր, որոնք ներկայացված են ինչպես իշխող, այնպես էլ ընդդիմադիր կուսակցություններում: Բնական է, որ նույն այդ անձերը եւ համապատասխան կառույցները չեն զլանում անհրաժեշտության դեպքում աջակցել ազգերներին: Սակայն ես չեմ կարող ասել, որ այդ ամենի արդյունքում ԳԴՀ իշխանությունները տարածաշրջանում իրականացնում են կողմնակալ քաղաքականություն: Իսկ դա նշանակում է, որ հայ դիվանագիտությունը գործել է բավականին արդյունավետ՝ հնարավորինս չեզոքացնելով մեզ համար անցանկալի զարգացումները: Սակայն, ինչ խոսք, թուրքական գործոնը կարեւոր տեղ է զբաղեցնում մեր ամենօրյա գործունեության օրակարգում:

Ինչ վերաբերում է ադրբեջանական միջոցառմանը, ինձ մի փոքր զարմացրեց այն աղմուկը, որ ստեղծեցին որոշ լրատվամիջոցներ: Ինչպես ինձ հայտնեցին մեր դեսպանության աշխատակիցները, մինչեւ օրս մեր կազմակերպած նման որեւէ միջոցառում չէր արժանացել այդքիսի ուշադրության: Ուստի, հաջորդ անգամ, մենք ավելի ուշադիր կլինենք լրատվամիջոցների հետ տարվող մեր աշխատանքներում: Իսկ ինչ վերաբերում է բուն «կոնֆերանսին» մասնակցությանը, ապա ակնհայտ է, որ շատ պարզ պատճառներով մենք հրավիրված չենք եղել: Սակայն մեր աղբյուրները, այդ թվում՝ գերմանական, մեզ հստակ վկայեցին, որ թեեւ ազերները փորձել են ապահովել մասնակիցների հնարավորինս բարձր մակարդակ, սակայն դա իրենց չի հաջողվել: Ըստ ականատեսի, կազմակերպիչները «ճոխացրել» են մասնակիցների ցուցակը՝ հղում կատարելով նաեւ այն հրավիրված անձերին, որոնք չեն մասնակցել միջոցառմանը: Հասկանալի պատճառներով չեմ խոսի մեր ծրագրերի մասին, բայց հավատացնում եմ, որ Դուք հնարավորություն կունենաք լուսաբանելու դրանք:

- Պարոն Մարտիրոսյան, երկու երկրների երկխոսությունն անկարելի է պատկերացնել առանց մշակութային ծրագրերի: Գիտակրթական, հուշարձանների պահպանության ոլորտում էլ կա հետաքրքրություն: 2010-ին ի՞նչ նորություններ են սպասվում: 2009-ի ամռանը Երեւանում նկատեցի, որ առողջապահական բնագավառում Հայաստանը Գերմանիայի հետ համագործակցությունը սերտացնելու սպասելիքներ ունի: Կա՞ն նոր առաջարկներ:

- Հայաստանի մշակութային ժառանգությունը եւ արվեստը մեծ հնարավորություններ են բացում նման համագործակցության համար: ԳԴՀ-ն այդ տեսակետից հասկանալի է այն առումով, որ այստեղ են բնակվում կամ աշխատում ժամանակակից արվեստի ազգությամբ հայ մեծ թվով աշխարհահռչակ գործիչներ: ՀՀ մշակույթի նախարարության ու այլ կառույցների հետ միասին աշխատում ենք եւ հույս ունեմ, որ 2010 թ. Գերմանիայում առիթ կունենանք պատշաճ ձեւով ներկայացնելու հայ արվեստն ու մշակույթը: Արդեն իսկ ձեռք է բերվել պայմանավորվածություն, 2010 թ. օգոստոսին Konzerthaus Berlin համերգասրահում Young Euro Classic փառատոնի շրջանակներում կազմակերպել Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի համերգը:

Առողջապահության բնագավառում համագործակցությունը շատ հեռանկարային է: Այն պայմանական կարելի է բաժանել երկու մասի. երկրների բուհերի եւ մասնավոր կլինիկաների միջեւ: Երկու ուղղությամբ էլ կան որոշակի ծրագրեր: Ակտիվ կապեր են հաստատվել Երեւանի եւ Բեռլինի Շարիտե բժշկական համալսարանների միջեւ, այդ համագործակցության արդյունքն էր 2009-ի հոկտեմբերին Երեւանում կայացած ուռուցքաբանության միջազգային կոնգրեսը: Արդիական ենք համարում հայ բժիշկների որակավորման բարձրացման նպատակով Գերմանիայի առողջապահական հիմնարկների հետ համագործակցությունը:

- Պարոն դեսպան, 6 տարի պաշտոնավարել եք Նյու Յորքում եւ շփվել տեղի հայ համայնքի հետ: Սփյուռքահայերին ունկնդրելով հաճախ նույն խոսքովանությունն եմ արձանագրել՝ Հայաստանը անկեղծ հետաքրքրություն չունի Սփյուռքի բազմաշերտ հասվածի հանդեպ: Ինչպիսի՞ փորձառություն եք կուտակել Դուք Նյու Յորքում, որ կարող է օգտակար լինել գերմանահայության հետ աշխատանքում: Գերմանահայությունը կենտրոնացված չէ մեկ վայրում, դեսպանությունը ի՞նչ աշխատաոճ է որդեգրել, որ կդյուրացնի հայ համայնքի հետ շփումը, համագործակցությունը:

- Թույլ տվեք չհամաձայնել Ձեզ հետ: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնությամբ սփյուռքի հարցերով նախարարության հիմնադրումը ամենավառ վկայությունն է Սփյուռքի հանդեպ Հայաստանի կողմից ոչ միայն իր անկեղծ հետաքրքրության, այլ նաեւ հոգատարության եւ համակարգված քաղաքականության: Մշակման եւ արդեն իսկ իրականացման փուլում են մի շարք կարեւոր ծրագրեր, կապը եւ համագործակցությունը համայնքային կազմակերպությունների հետ ստանում է գրեթե ամենօրյա բնույթ: Դա թույլ է տալիս վերջիններիս տեղեկացված լինել հայությանը վերաբերող քիչ թե շատ կարեւոր խնդիրների վերաբերյալ: Մի քանի օրինակ. ՀՀ կառավարությունը այժմ մշակում է հայրենադարձության հայեցակարգը եւ մենք, Երեւանից ստանալով այդ փաստաթուղթը ուղարկեցինք այն համայնքային կազմակերպություններին՝ հայցելով իրենց կարծիքը, առաջարկները դրա վերաբերյալ: Գերմանիայում գործում են շաբաթօրյա/կիրակնօրյա դպրոցներ, եւ դեսպանությունը՝ համայնքային կազմակերպությունների հետ միասին, քայլեր է ձեռնարկում աջակցելու դրանց գործունեությանը: Խնդիրները շատ են. այլ բան է, որ պետության հնարավորությունները միշտ չէ, որ համապատասխանում են ցանկություններին, բայց համոզված եմ, որ Հայաստան-Սփյուռք հարաբերությունները որակական նոր փուլ են ապրում:

Ինչ վերաբերում է համայնքի հետ համագործակցելու իմ նյույորքյան փորձին, անկասկած դա ինձ համար անգնահատելի էր: Օբյեկտիվ հանգամանքների բերումով ԱՄՆ-ում առկա են կազմակերպված եւ բարձր արդյունավետությամբ գործող համայնք, զանազան հայկական կազմակերպություններ: Ինչ խոսք, ԳԴՀ հայ համայնքը ավելի փոքրաթիվ է, դա չի կարող չանդրադառնալ վերջինիս գործունեությանը:

Հայկական եկեղեցիների սակավությունը, որտեղ սովորաբար հայ համայնքները հիմնում են նման դպրոցներ, իր հերթին նույնպես բարդացնում է իրավիճակը: Բայց նվիրյալների շնորհիվ ի հեծուկս դժվարությունների այդ հաստատությունները գործում են: Հայաստանում պետական միջոցների հաշվին սփյուռքահայ կրթօջախների համար հրատարակվում են դասագրքեր եւ գրականություն: Ցանկանում եմ հատուկ նշել Սփյուռքի նախարարության դերը եւ հաջողված քայլերն այս ուղղությամբ: Նախարարության նախաձեռնությամբ մշակվում եւ արդեն իրականացվում են մի շարք արդիական ծրագրեր, որոնք հնարավորություն կտան բարելավել սփյուռքում գործող շաբաթօրյա/կիրակնօրյա դպրոցների գործունեությունը: Անելիքները շատ են, եւ խնդրի հրատապությունը եւ նշանակությունը պարտադրում են մեզ լինել ավելի նախաձեռնող եւ հետեւողական:

Այցեքարտ

Ծնվել է 1961-ի փետրվարի 10-ին: Ավարտել է Երեւանի 122-րդ դպրոցը:

1978-1983-ին սովորել եւ ավարտել է Երեւանի պոլիտեխնիկ ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը: 2004-2006-ին ուսանել է Նյու Յորքի Կոլումբիա համալսարանում, ստացել է միջազգային տնտեսագիտության մագիստրոսի որակավորում:

1983-1991-ին աշխատել է «Հրազդանմաշ» արտադրական միավորումում՝ որպես ինժեներ, հետագայում՝ փոխտնօրեն: 1990-1995-ին՝ ԱԺ պատգամավոր: 1992-93-ին եղել է վարչապետի խորհրդական: 1997-1998-ին՝ «Հայէկոնոմբանկի» գործադիր տնօրեն: 1995-1999-ին վերընտրվել է, ԱԺ պատգամավորը ղեկավարել է Եվրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովում ՀՀ պատվիրակությունը: 1999-2003-ին աշխատել է փոխարտգործնախարար, 2003-2009-ին պաշտոնավարել է ՄԱԿ-ում՝ ՀՀ մշտական ներկայացուցիչ, ՀՀ դեսպան:

Տիրապետում է հայերենին, ռուսերենին, անգլերենին:

Ամուսնացած է, ունի երկու որդի:

Հարցազրույցը վարեց
ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

AZG NEW PDF.qxd 1/19/2010 10:16 PM Page 1

ԵՄ-ը Հաիթիին կհատկացնի 200 մլն եվրո

ԱՄՆ-ը մեղադրվում է Հաիթիի օկուպացման մեջ



Եվրոմիությունը իր բյուջեից 200 մլն եվրո կհատկացնի երկրաշարժից ավերված Հաիթիի Հանրապետության վերականգնմանը: Այդ որոշումն ընդունվել է Բրյուսելում ԵՄ նախարարների արտակարգ հանդիպման ընթացքում, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Բացի դրանից, Ֆրանսիան որոշել է առանձին 10 մլն եվրո հատկացնել Հաիթիին: Այդ մասին նշվում է արտգործնախարար Բեռնար Կուշների ստորագրած պաշտոնական դիմումի մեջ:

ՄԱԿ-ի տվյալներով, միջազգային ընկերակցությունը Հաիթիի աղետյալ ժողովրդին օգնելու նպատակով արդեն տրամադրել է 562 մլն դոլար: Կոզի են հասցվում փրկարարական տեխնիկա, առաջին անհրաժեշտության առարկաներ, դեղորայք, սննդամթերք, խմելու ջուր:

Հունվարի լույս 12-ի գիշերը Հաիթիում տեղի ունեցած 7 բալանոց երկրաշարժը Կարիբյան ծովի շրջանում ամենաուժեղն էր դիտարկումների ամբողջ ընթացքում: Հաիթիի մայրաքաղաք Պորտ օ Պրենսը գրեթե լիովին ավերված է: Իշխանությունների գնահատմամբ, երկրաշարժի զոհերի թիվը կարող է հասնել 200 հազարի:

Փրկարարական աշխատանքները շարունակվում են ոչ այնքան արդյունավետ կերպով եւ արդեն քաղաքական վեճերի պատճառ են դարձել: Երկրաշարժից հետո Հաիթիում տերությունների ամերիկյան զորքերի գործողությունների պատճառով Ֆրանսիան ԱՄՆ-ին մեղադրում է այդ կարիբյան երկրի օկուպացման մեջ եւ ՄԱԿ-ին խնդրել է ճշտել ամերիկացիների դերը: Պորտ օ Պրենսի օդանավակայանում դիսպետչերների դեր ստանձնելով՝ ամերիկացի զինծառայողներն առաջնությունը տալիս են սեփական բանակի չվերթերին, իսկ մյուս օդանավերին, այդ թվում՝ կենսականորեն անհրաժեշտ բեռներ բերողներին, չեն թույլատրում վայրէջք կատարել: Այդ մասին հայտարարել է Ֆրանսիայի համագործակցության գործերի եւ ֆրանկոֆոնիայի պետքարտուղար Ալեն Ժուպե:

Համանման կոշտամբանքով հանդես է եկել Ժնեւում հիմնավորված «Բժիշկներ առանց սահմանների» միջազգային կազմակերպությունը: Դրա ներկայացուցիչները հայտարարել են, որ օգնություն բերող օդանավերը «հետ շրջելով»՝ ամերիկացիները կործանման վտանգի են մատնում հարյուր հազարավոր աղետյալ հաիթցիների:

Մինչդեռ ԱՄՆ-ը հայտարարում է, որ Հաիթիում իր ռազմական ներկայության ուժեղացումը օկուպացիա չէ, եւ իր գլխավոր նպատակն է՝ անվտանգության եւ օգնության ապահովումը: Բրիտանական «Դեյլի թելեգրաֆ» թերթը գրում է, որ ՄԱԿ-ի միջամտությունից հետո ամերիկացիները պարտավորվել են վայրէջքի հնարավորություն տալ առաջին հերթին մարդասիրական չվերթերի օդանավերին:

Թալիբները գուցե հրեաներ՞ն են

Իսրայելի կառավարությունը փորձում է ստուգել այն վարկածը, թե թալիբները կարո՞ղ են հրեական ծագում ունենալ: Արտգործնախարարությունը որոշել է ֆինանսավորել այն հետազոտությունները, որոնց նպատակն է վերջնական պատասխան տալ տվյալ հարցին: Իսկ դրա համար պետք է պարզել, թե փուշտունները (որոնցից սերում են թալիբները) Իսրայելի անհետացած տասը ցեղերից որեւէ մեկի ժառանգնե՞րն են, թե՞ ոչ: «Ֆիգարո» թերթը տեղեկացնում է, որ հետազոտություններն անցկացվելու են Հնդկաստանում, քանի որ անհնար է դրանք իրականացնել Աֆղանստանում եւ Պակիստանում:

Վաղուց ի վեր փուշտունները (կամ պաթանները) ապրում են Աֆղանստանի հարավային եւ հարավարեւելյան շրջաններում եւ Պակիստանի արեւմուտքում ու հյուսիս-արեւմուտքում: Ենթադրվում է, որ նրանք Իսրայելի անհետացած ցեղերից մեկի հետնորդներն են: Ծեսերի, հագուկապի, ընտանեկան եւ խոհարարական ավանդույթների նմանությունները խորհել են տալիս, որ փուշտունների նախնիները հրեաներ են:

Քչերին է հայտնի, որ Հնդկաստանում գոյություն ունի փուշտունների մի քանի համայնք: Դա պատեհություն է նրանց արմատները փնտրող գիտնականների համար, որոնք արդեն իսկ աշխատում են Հնդկաստանի հյուսիսում՝ Ուտտար Պրադեշի նահանգի կենտրոն Լակնաու քաղաքում:

Լակնաուի փուշտունական շրջան Մալիհաբադում աշխատում է տեղական համալսարանի պրոֆեսոր Նավրաս Ջաաթ Աֆրիդին, որն անհնար է համարում ԴՆԹ-ի նմուշների հավաքումը Աֆղանստանում կամ Պակիստանում: Գիտնականն ինքը փուշտունական ծագում ունի եւ փորձում է վերջնականապես բացահայտել իր նախնիներին:

«Թալիբներին չասեք, բայց նրանց նախնիները գուցե հրեաներ են», հեգնանքով ասում է Երուսաղեմում ABC News-ի թղթակից **Սիմոն Մաքրեգորը**, քանզի հայտնի է, թե թալիբներն ինչպիսի ատելությամբ են վերաբերվում Իսրայելին:

Հիշյալ հետազոտությունները ֆինանսավորելով, Իսրայելը ըստ երեւույթին հույս ունի հաշտեցնել մահմեդականներին եւ հրեաներին: Այս տեսակետն է արտահայտում մասնավորապես պրոֆեսոր Աֆրիդին, որը երեւի ինքն էլ շատ չի հավատում իր ասածին:



Ամերիկացիների 20 տոկոսը կարդում է էլեկտրոնային գրքեր

2009-ին ամերիկացի ընթերցողների 20 տոկոսը դադարեցրել է թղթե գրքերի գնումները եւ անցել է էլեկտրոնային հրատարակությունների ընթերցմանը: The Book Industry Study Group-ի հետազոտության արդյունքները հրապարակվել են բրիտանական The Independent թերթում:

Հարցման մասնակիցների 47 տոկոսը էլեկտրոնային գրքերը կարդում է համակարգչով, 32 տոկոսը՝ Kindle ընթերցման սարքով: Նմանօրինակ ընթերցողների 81 տոկոսը «հազվադեպ» կամ «դեպքից դեպք» է ձեռք բերում էլեկտրոնային գրքեր: Միայն 28 տոկոսն է պատրաստ ձեռք բերել թվային իրավունքների պաշտպանությամբ օժտված էլեկտրոնային գրքեր: Այդ իրավունքն արգելում է նման գրքերը տեղափոխել մի սարքից մյուսը:

ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ

Մահմեդականների եւ քրիստոնյաների բախումներ Նիգերիայում

Նիգերիայում մահմեդականների եւ քրիստոնյաների զանգվածային բախումների հետեւանքով վերջին երկու օրերին սպանվել են 26 եւ վիրավորվել 300 անձինք: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը՝ վկայակոչելով երկրի ոստիկանության ներկայացուցչներին:

Արյունալի անկարգությունները բռնկվել են Նիգերիայի հյուսիսում՝ Ջոս քաղաքում (Պլատոյի նահանգ): Բախումների առիթ է դարձել քաղաքի առավելապես քրիստոնեաբնակ թաղամասում մզկիթի շինարարության ձեռնարկումը: Մոլեգնած ամբոխը սկսել է հրկիզել տներ եւ ավտոմեքենաներ: Քաղաքում հաստատված է պարետային ժամ, անվտանգության ուժերը պարեկություն են անում փողոցներում:

Կրոնական հողի վրա բախումներ հաճախ են տեղի ունենում 150 միլիոնանոց Նիգերիայում, որը բնակչության թվով Աֆրիկայի առաջին պետությունն է: Բնակչության կեսը կազմող մահմեդականներն ապրում են երկրի հյուսիսում, մյուս կեսը կազմող քրիստոնյաները՝ հարավում:

Ցմահ բանտարկություն՝ ՉԺՀ գերագույն դատարանի նախկին փոխնախագահին

ՉԺՀ գերագույն ժողովրդական դատարանի նախկին փոխնախագահ Հուան Սունյուն դատապարտվել է ցմահ բանտարկության՝ ունեցվածքի բռնագրավմամբ եւ զրկվել է քաղաքական իրավունքներից: Այդ մասին հաղորդում է Սինհուա գործակալությունը:

Հուան Սունյուն 52 տարեկան է: Նա 2005-2008 թթ. գերագույն դատարանի փոխնախագահ էր եւ այդ տարիներին կաշառքներ է վերցրել ավելի քան 3,9 մլն յուան (574 հազար դոլար) ընդհանուր գումարով: Բացի դրանից, պաշտոնյան 1997-ին յուրացրել եւ վատնել է 1,2 մլն յուան (176 հազար դոլար):

ՉԺՀ պետական իշխանության բարձրագույն մարմինը՝ Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի մշտական կոմիտեն 2008-ին պաշտոնանկ է արել Հուան Սունյուին: Նա գերագույն դատարանի առաջին դատավորն է, որ հեռացվել է եւ դատապարտվել կաշառակերության մեղադրանքով:

Դատական լսումների ժամանակ ամբաստանյալը լիովին ընդունել է իր մեղքը: Աստիճանաբար նրա սատացած փողերի մեծ մասն արդեն վերադարձված է պետությանը:

Լեհական բանակը վաճառում է մթերքի եւ գույքի պաշարներ

Լեհաստանի բանակը հայտարարել է, որ պատրաստվում է իջեցված գներով վաճառել մթերք եւ գույք: Մթերքները վաճառքի կհանվեն, քանի որ դրանց պահպանության ժամկետը շուտով սպառվելու է, նշում է Բելտա գործակալությունը:

Մեծածախ եւ մանրածախ կարգով ընդհանուր առմամբ կվաճառվի ավելի քան 1800 տոննա մթերք, այդ թվում՝ 240 տոննա մսի պահածո, 60 տոննա պահածոյացված ճարպ, 5 տոննա սալտիսոն, 140 տոննա ձկան պահածո, ինչպես նաեւ 540 տոննա շաքար, 200 տոննա մակարոն, 100 տոննա ոլոռ եւ լոբի, 60 տոննա բրինձ, փաթեթավորված թեյ եւ հաց:

Մթերքները կվաճառվեն շուկայականից անհամեմատ ցածր գներով: Ենթադրվում է, որ գլխավոր գնորդները կլինեն մեծածախ պահեստները եւ հասարակական սննդի ձեռնարկությունները:

Ինչ վերաբերում է արդյունաբերական ապրանքներին, բանակին այլեւս պետք չեն ավելի քան տասը տարի առաջ թողարկված (բայց չօգտագործված) փոխանները, սրբիչները, նռնակների պայուսակները, չգործող տոփչները, ինչպես նաեւ 4000 տաբատակալ եւ 130 կգ մեխ:

Հատուկ թույլտվություն ունեցողները կարող են ձեռք բերել հին զրահամեքենաներ եւ թնդանոթներ:

1996-ին Լեհաստանում ստեղծված բանակային գույքի գործակալությունը մինչեւ օրս վաճառել է ավելի քան 300 մլն եվրո գումարի ապրանքներ: Վաճառքի հասույթը մուտք է արվում ազգային պաշտպանության նախարարության բյուջե:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի հեռուստատեսային ցանց» ՓԲ ընկերությունը (պատվիրատու) «ՄԲԱՀՀՈՑ 01/10» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության համար արբանյակային հաղորդիչ կայանի կառուցման տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերման նպատակով:

Մրցույթի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար՝ 1000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի ԱՇԻԲ, Աղասյան մ/ճ 247460117994 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Նորք, Հովսեփյան 95:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ը:

«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ

AZG NEW PDF.qxd 1/19/2010 10:15 PM Page 1

Էդվարդ Սասուն. Հոգու դիմանկար

Ծննդյան 55-ամյակի առթիվ

Թայլանդում եւ մի շարք այլ երկրներում լայն ճանաչում վայելող հայ գեղանկարիչ Էդվարդ Սասունի (Ավագյան) երեւանյան ցուցահանդեսները (*) հայտնություն էին արվեստասերների եւ արվեսագետների համար: Երկար տարիներ հայրենիից հեռու ապրած նկարիչն իր առաջին ցուցահանդեսը վերնագրել էր «Վերադարձ դեպի արմատները»:

Արմատներով Սասունից, իրենց բնաբխարհի նմանությամբ Թալինի Շղարշիկ գյուղում վերաբնակեցված մանկավարժ ծնողների որդին՝ Էդվարդը, մանկությունից հայել եւ հմայվել է արարչագործ բնության հրաբալիքներով: Իր ապրածն ու զգացածը վերապատմել է նկարչության լեզվով: Դպրոցական տարիներին նկատվել, խրախուսվել է արվեստի հանդեպ ունեցած շնորհը: Համակողմանի հետաքրքրությունների տեր տղան, ընտրել է ճշգրիտ գիտությունների ապարեզը: Սովորել եւ ավարտել է Երեւանի պետհամալսարանի կիբեռնետիկայի ֆակուլտետը, սացել մաթեմատիկոս-կիբեռնետիկի եւ տնտեսագետի որակավորում:

Սերը դեպի արվեստը երբեք չի դադարել. համալսարանական տարիներին շարունակ նկարել է, ցուցահանդեսներ բացել Կինոյի տան սրահում:

Իրեն հատուկ անմիջականությամբ Էդվարդը խոստովանում է, որ այդ տարիներին իրեն հանճար էր պատկերացնում: Միաժամանակ ներքուս, խորապես գիտակցում է կրթության պակասը, կատարողական վարպետության բացակայությունը եւ ծնողների կամքին հակառակ մեկնում Լենինգրադ (այժմ Սանկտ-Պետերբուրգ)՝ ուսանելու:

Ընդունվում է Ի. Ե. Ռեպինի անվան Գեղարվեստի ակադեմիա, երկու տարի սովորում գրաֆիկայի բաժնում: Ուսուցիչը՝ վաստակավոր նկարիչ, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Վլադիմիր Վետրոգոնսկին, պահպանելով Էդվարդի ինքնուրույնությունը, հետեւողականորեն ընդլայնում է նրա գիտելիքներն ու շնորհը: Գծանարի, ջրաներկի գաղտնիքներին տիրապետելուց հետո Էդվարդը տեղափոխվում է գեղանկարչության բաժին՝ Բորիս Ուգարովի արվեստանոց:

Էդվարդ Սասունը երախտագիտությամբ է հիշում իր ուսուցիչներին՝ Վլադիմիր Վետրոգոնսկուն եւ Բորիս Ուգարովին, ովքեր իրենց սկզբունքայնությամբ ու վարպետությամբ անանց հետք են թողել նկարչի հիշողություններում, ճանապարհ հարթել դեպի արվեստ:



Ակադեմիայում որպես դիպլոմային աշխատանք Էդվարդը ընտրում է Մեծ եղեռնի թեման:

Օրորոցայինի փոխարեն ծնողներից լսած կոտորածի, գաղթի ահասարսուռ պատմությունները հանգիստ չէին տալիս նրան: Այրան կանչով պատենական հողի հետ ամուր կապված նկարիչը պնդում է թեմայի հաստատումը, որը մերժվել էր հանձնաժողովի կողմից քաղաքական նկատառումներով: Եվ միայն սիրելի պրոֆեսորի՝ Ուգարովի խոսքից հետո. «Պարոնա՛յք, դուք քաջ գիտեք, որ Հայոց մեծ եղեռնը ոչ միայն հայ ազգի, այլեւ համայն աշխարհի ողբերգությունն է: Դա չարի հաղթանակն էր բարու հանդեպ: Եվ այժմ դուք կրկի՞ն ցանկանում եք, որ չարը հաղթի բարուն...», հանձնաժողովի անդամները միաձայն հաստատում են թեման:

Նկարիչը միաժամանակ ստեղծում է երկու պատմական կտավ՝ գաղթի թեմաներով: Դիպլոմային աշխատանքում արդեն ակնառու է լուրջ մասնագիտական պատրաստվածությունը, պատմական գիտելիքները, տրամաբանությունը, որի արտահայտությունը՝ հորինվածքային բարդ լուծումներն ու գունաշարի ընտրությունն են: Այս հանգամանքը նկատվել ու բարձր էր գնահատվել ուսուցչի՝ Ուգարովի կողմից:

Անցյալի եղերական դրվագներից մեկի՝ գաղթի պատկերումը, իրականացված է աստ ականատեսի աչքերով: Դրամատիկ մի պահ, ուր բնօրանից բռնի ուժով տեղահանված տանջահար ծերերն ու կանայք իրենց մանկահասակ երեխաների հետ քայլում են դեպի անհայտություն: Պահի դրամատիզմը խտացված է մուգ գունաշարի, ներքին դինամիկ շարժման, անհանգիստ վրձնահարվածների միջոցով:

«Գաղթականներ» կտավը իր համոզիչ պատկերներով, բովանդակային եւ զգացմունքային հագեցվածությամբ Էդվարդ Սասունի ընտրած դժվարին ուղու վկայությունն է:

Էդվարդ Սասունը բազմաժանր նկարիչ է. թեմատիկ հորինվածք, դիմանկար, բնանկար, նատյուրմորտ, գրաֆիկա, որոնք առանձնանում են անհատական կենսափիլիսոփայությամբ, բնորոշ ձեռագրով:

Նկարիչն իր արվեստում հետեւում է ռուսական իրապաշտական դպրոցի լավագույն ավանդույթներին, համաշխարհային դասականներին: Նա երբեք չի բավարարվում ձեռքբերումներով: Իրապաշտական արվեստը զարգանալու անսահմանափակ հնարավորություններ ունի: Նորանոր ձեւերի, միջոցների որոնումը անընդմեջ ընթացք է, որին ձգտում է արվեստագետը:

Էդվարդ Սասունի արվեստի բնորոշ առանձնահատկությունը տիեզերական ընդգրկումն է, կենսափիլիսոփայությունը, համամարդկային արժեքների գնահատումը՝ անկախ ազգային, կրոնական, մշակութային պատկանելիությունից: Գերխնդիրը՝ տիեզերական գաղտնաշերտերի բացահայտումն է, ուշադրության կենտրոնում՝ մարդ-բնություն, մարդ-մարդ փոխհարաբերությունը:

Այս է նկարչի արվեստի գաղափարական հենքը, լինի այն պատմական, աստվածաշնչյան թե արդիական թեմայով հորինվածք, բնանկար, դիմանկար թե նատյուրմորտ:

Աշխարհի որ ծայրում էլ լինի՝ Արեւելք թե Արեւմուտք, նկարիչը տեսնում, գնահատում է գեղեցիկը: Ներթափանցելով տվյալ երկրի բնաբխարհի, ազգային մշակութային առանձնահատկությունների մեջ, բացահայտում եւ կտավին է հանձնում սովորական աչքի համար անտեսանելին: Համամարդկային թեմաներ՝ հավերժ հուզող խնդիրներով, պատմական, աստվածաշնչյան բնապատկերներ՝ եղանակային հարափոփոխ հմայքով, դիմանկարներ՝ ազգային եւ տարիքային անսահմանափակ տարբերությունների հարստությամբ, ծովանկարներ՝ լուսնյակ գիշերների կախարդական փայլով, հայրենի բնաբխարհի հարազատ պատկերներ՝ բիբլիական Արարատի վեհաշուք օրհնությամբ, նատյուրմորտներ՝ տարբեր ազգերին բնորոշ տարրերի առկայությամբ:

Շուրջ ութ տարի Էդվարդ Սասունն ապրել եւ ստեղծագործել է Թայլանդում: Արեւելքն իր կոլորիտով, հարուստ ստեղծագործական հումք է տվել նկարչին, ընդլայնել կոմպոզիցիոն մտածողությունը: Թայլանդում ապրած տարիները արգասաբեր էին նկարչի կյանքում ստեղծագործական եւ ճանաչման առումով: Արվեստի մեկենասների շնորհիվ նրա կտավները տեղ են գտել աշխարհի բազմաթիվ նշանավոր հավաքածուներում՝ Անգլիա, Մալազիա, Թայլանդ, Ինդոնեզիա, Նորվեգիա, Չեխիա, Ռուսաստան, Չինաստան, Թայվան, Ճապոնիա, Հվ. Կորեա, Ավստրալիա, Լիբանան, Սինգապուր, Հայաստան, Ֆրանսիա...

Արտերկրում ապրելով իդեալական պայմաններում, հարգանք եւ ճանաչում վայելելով, հայրենի հողի ուժը ձգում, վերադարձնում է նկարչին հայրենիք՝ իր տեսածի ու զգացածի, իր ապրումների լուծումները այստեղ գտնելու: Աշխարհի որ անկյունում էլ լինի, նկարչի հոգու աչքերում մշտապես Հայաստանն է՝ իր օդ ու ջրով, լուսնյակ գիշերներով, լեռներով, քարքարոտ հողերով:

Էդվարդ Սասունի երեւանյան ցուցահանդեսները նրա անցած ճանապարհի հանրագումարն էին: Արվեստագետներից շատերը, որոնք լսել, բայց ծանոթ չէին նկարչի գործերին, հաճելիորեն զարմացան:

«Ուղղակի զարմացա, որ երկար տարիներ արտասահմանում լինելով հանդերձ, հաջողության է հասել առանց «ծռմռվելու», չդավաճանելով ռեալիզմը: Լուրջ դպրոց է անցել, վարպետ է դարձել ուսումնական տարիներին: Ձրաներկը այն բնագավառն է, որ դժվար է աշխատվում: Ձրաներկով հաջողված են դիմանկարները»:

Գրիգոր Աղասյան
ՀՀ արվեստի վաստակավոր
գործիչ, պրոֆեսոր

«Այս տխուր վիճակներում Սասունի արվեստը ուժ է տալիս ապրելու: Պրոֆեսիոնալ է, ունի իր ոճը, մտածելու ձեւն ու գույնը»:

Հակոբ Հակոբյան
ՀՀ ժողովրդական նկարիչ

Թող որ հող հայրենին նոր ուժ տա Էդվարդ Սասունին՝ այդման զուտ դրամատիզմով, նաեւ ներթափույց ֆնարականությամբ առլեցուն, արարելու հիանալի կտավներ:

ՇՈՒՇԱՆ ՈՍՏՈՒՆԻ
Արվեստաբան

(*) 2007 թ. Երեւանի Գեղարվեստի պետական ակադեմիա «Ալբերտ եւ Թովմաս Բոյաջյան» պատկերասրահ, 2009 թ. Երեւանի քաղաքապետարանի «Հայ Արտ» մշակութային կենտրոն:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Քննադատություն... Արվեստ... Կրիտիկա...

Ես, որպես երիտասարդ նկարիչ, իմ մտահոգությունն եմ արտահայտում այն իրավիճակի հանդեպ, որը տիրում է գեղանկարչության ոլորտում եւ նախապես ասեմ, որ մեր պետությունն իր մշակույթի նախարարությունով կարծես գտնվում է անջրպետի մի կողմում, իսկ նկարիչները (առավել եւս երիտասարդ)՝ մյուս: Այս պայմաններում, ըստ իս, առաջանում է գեղանկարչական քննադատության-գեղանկարիչ քննադատի անհրաժեշտությունը:

Ճիշտ քննադատությունն ազդում է նկարչի աշխարհայացքի վրա (առավել եւս երիտասարդ), օգնում նրան ձեւավորվել որպես ստեղծագործողի, ձեռք բերել ինքնավերահսկում: Քննադատությունը երբեմն կարող է վիրավորել հեղինակային ինքնասիրությունը, սակայն առանց դրա, նկարչի ստեղծագործական աճ չի կարող լինել: Նրան անհրաժեշտ է ինքնահսկողություն, որի լավագույն խորհրդատուն կարող է լինել ճշմարիտ քննադատությունը, որն արտացոլում է նաեւ ստեղծագործական եւ նկարչական ժամանակին բնորոշ հոգեբանական վիճակներ: Այլ նկարիչների եւ տվյալ հեղինակի նախորդ ստեղծագործությունների ճիշտ մեկնաբանություններն օժանդակում են նոր ստեղծագործության ստեղծման ընթացքին, արվեստագետին հաղորդում նոր լիցքեր, ազդակներ, տալիս ուղղություն:

Քննադատությունը համագործակցում է ստեղծագործության հետ, բացահայտում նրա միտքն ու էությունը, նրա շուրջը ստեղծում հասարակական կարծիք: Քննադատը «արվեստի» թերացքը չի կարող դարձնել էսթետիկական անհրաժեշտություն:

Եթե քննարկենք մյուս՝ (ստեղծագործություն-ընկալում) օղակը, ապա այստեղ քննադատն օգնում է (դիտորդին, գնորդին, այլոց)՝ ուշադիր զննելու ստեղծագործությունը, լուսաբանում եւ բացատրում է: Երիտասարդ նկարչի ոգեշնչվածությունն ու մտահաղացումները կարող են եւ չընկալվել ժամանակակիցների կողմից, այս պարագայում պրոֆեսիոնալ քննադատությունը հասարակությանը կողմնորոշելու առաքելություն ունի, արվեստում առկայծող նորի, առաջադիմականի հանդեպ: Մեծ է քննադատության դերը նաեւ արվեստասեր հանրության մոտ նկարչական ճաշակի ձեւավորման ու ստեղծագործության հանդեպ ճիշտ պատկերացում ձեւավորելու մեջ:

Գեղարվեստական քննադատությունը կարող է ոգեշնչել արվեստասերին, ի վիճակի է ազդել ընկալողի գիտակցության եւ սոցիալական ակտիվության վրա, ինչի մասին Ֆ. Դոստոեւսկին դիպուկ ասել է, որ որեւէ քննադատ պետք է լինի հրապարակախոս եւ պարտավոր է ոչ միայն ունենալ ամուր համոզմունքներ, այլեւ կարողանալ դրանք իրականացնել կյանքում:

Քննադատությունը նկարչական ստեղծագործությունը մտցնում է հասարակական կյանք, սոցիալական ոլորտ: Քննադատը պետք է հասարակական-քաղաքացիական սկզբունքներ եւ հստակ աշխարհայացք ունենա:

Քննադատությունը ճշտում է ստեղծագործության ու իրականության հարաբերությունները, մեկնաբանում գեղարվեստական ստեղծագործության ճշմարտացիությունը: Այն նաեւ օգնում է երիտասարդ նկարչին կողմնորոշվելու ե՛ւ ժամանակակից արվեստի, ե՛ւ գեղանկարչական նորամուծության, ե՛ւ դասական ժառանգության, ե՛ւ ավանդույթների հանդեպ:

Լինել քննադատ արդեն իսկ ենթադրում է լինել թեորետիկ, ուսումնասիրել ժամանակակից արվեստը նշանակում է ոչ միայն պարզապես իմանալ նկարիչների անունները, ստեղծագործական կենսագրությունն ու գործերը, այլ նաեւ մեկնաբանել գեղանկարչական ոճերն ու ուղղությունները, մեթոդներն ու ձեւերը, որոնցից բաղկացած է այդ գիտությունը:

ԱՐՄԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երիտասարդ նկարիչ

AZG NEW PDF.qxd 1/19/2010 10:56 PM Page 1

Վեհերանները թողնում են ասպարեզը

Գյումրիի «Շիրակը» հանրապետության ֆուտբոլային թիմերից միակն է, որը մշտապես հենվել է սեփական կադրերի վրա, որոնք երկար տարիներ հավասարմորեն ծառայել են հարազատ կոլեկտիվին: Ավելորդ չէ նշել, որ ֆուտբոլի Հայաստանի նախորդ 18 առաջնություններում «Շիրակում» հանդես են եկել միայն երկու ոչ գյումրեցի ֆուտբոլիստներ՝ ղարաբաղցի Մհեր Ավանեսյանն ու Երեւանի «Արարատի» նախկին ֆուտբոլիստ Աբրահամ Խաչմանյանը:

Վերջին տարիներին, երբ «Շիրակի» ֆինանսական վիճակը վատթարացավ, թիմի մի խումբ ֆուտբոլիստներ ստիպված հեռացան կոլեկտիվից՝ տեղափոխվելով այլ ակումբներ: Դա չէր կարող իր բացասական ազդեցությունը չունենալ թիմի մրցելույթների վրա: Ժամանակին Հայաստանի ամենատիտղոսակիր ակումբն արդեն քանի մրցաշրջան է չի մասնակցում մրցանակային տեղերի համար մղվող պայքարին՝ համեստ դիրքեր զբաղեցնելով մրցաշարային աղյուսակում: Բացառություն չկազմեց նաեւ նախորդ առաջնությունը: Դեռեւս մեկնարկում թիմի գլխավոր մարզչի պաշտոնից անսպասելիորեն հրաժարվեց փորձառու Ժորա Բարսեղյանը, որին փոխարինեց «Շիրակի» 32-ամյա ֆուտբոլիստ Վարդան Բիչախչյանը: Բնականաբար մարզչական աշխատանքի փորձ չունեցող Բիչախչյանը չէր կարող կտրուկ բարելավել «Շիրակի» խաղը:

Նոր մրցաշրջանում էլ «Շիրակի» համար հեշտ չի լինի, քանի որ թիմի մի քանի փորձառու վետերաններ հրաժեշտ են տվել մեծ ֆուտբոլին: Խոսքը 35-ամյա Ֆելիքս Խոջոյանի, 34-ամյա Հովհաննես Դեմիրճյանի ու Արարատ Հարությունյանի եւ 32-ամյա Հենրիկ Բաղիկյանի մասին է: Ինչ խոսք, նրանց արժանի փոխարինողներ գտնելն այնքան էլ հեշտ չի լինի, քանի որ թիմի կազմը համալրել են «Շիրակ-2-ի» երիտասարդ մի քանի խաղացողներ: Ֆելիքս Խոջոյանը ներկայումս օգնում է Վարդան Բիչախչյանին մարզչական աշխատանքում:

«Շիրակը» մարզումները սկսել է 2009-ի դեկտեմբերի 14-ից: Օգտվելով բարենպաստ եղանակից, մարզումներն անցկացվում են նաեւ բացօթյա: Ներկա փուլում առայժմ գլխավոր ուշադրությունը դարձվում է ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստությանը: Մարզումներին չի մասնակցում «Շիրակի» ռմբարկու Անդրանիկ Բաղիկյանը, որը ներկայումս հանդես է գալիս Լիբանանում: Իսկ ահա «Շիրակի» խորհրդանիշը դարձած 40-ամյա Հովհաննես Թահմազյանը, որ ՀՀ առաջնություններում անցկացրած խաղերի քանակով (423) յուրօրինակ ռեկորդակիրն է, նույն ջանասիրությամբ ու եռանդով է նախապատրաստվում բարձրագույն խմբում իր 19-րդ մրցաշրջանին:

«Շիրակը» մտադիր է հնարավորինս շատ ստուգողական հանդիպումներ անցկացնել, որպեսզի ֆուտբոլիստները խաղային պրակտիկա ձեռք բերեն: Թիմն Արարատում ուժերն է չափել Դիլիջանի «Իմպուլսի» հետ ու պարտվել է 1-2 հաշվով: «Շիրակից» աչքի է ընկել Մկրտիչ Նալբանդյանը, «Իմպուլսից» 2 գոլերն էլ խփել է Արման Մինասյանը:

Ուժեղագույնները կշարունակեն պայքարը

Մոսկվայում ավարտվեց ֆուտբոլի «Համագործակցության գավաթի» խաղարկության նախնական փուլը, որի արդյունքներով հայտնի դարձան քառորդ եզրափակիչի բոլոր մասնակիցները: Ժամկետից շուտ պայքարից դուրս մնացած «Փյունիկը» վերջին խաղում էլ պարտվեց՝ 1-6 հաշվով զիջելով մոլդովական «Դաչիային», որի կազմում 5 գոլ խփեց Բուգաեւը: «Փյունիկից» միակ գոլը խփեց Էկբետան: Թեեւ հաղթանակին, մոլդովացիներին չհաջողվեց հաջորդ փուլի ուղեգիր նվաճել, քանի որ «D» խմբի մյուս խաղում «Բունեդկորը» ու «Էկրանասը» ոչ-ոքի (2-2) խաղացին:

Այսօր կայանալիք քառորդ եզրափակիչ հանդիպումներում «Բունեդկորը» կմրցի Թուրքմենստանի ՄԹԹՈ-ի թիմի հետ, իսկ «C» խմբի հաղթող Կիեւի «Դինամոյի» մրցակիցը կլինի լիտվական «Էկրանասը»: Դինամոյականները 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեցին՝ 4-2 հաշվով պարտության մատնելով ՄԹԹՈ-ին: Վերջինս մեկ միավոր պակաս վաստակեց ՌԴ ակումբների հավաքականից, որը ոչ-ոքի (1-1) խաղաց էստոնական «Լեւադիայի» հետ: Բայց քանի որ ՌԴ ակումբների հավաքականը հաշվարկից դուրս է հանդես գալիս, ուստի պայքարը կշարունակի ՄԹԹՈ-ն:

«B» խմբի հաղթող ճանաչվեց ղազախական «Ակտոբեն»՝ 2-0 հաշվով հաղթելով Ադրբեջանի «Բակիին»: Վերջինս դուրս մնաց պայքարից, իսկ 2-րդ ուղեգիրը նվաճեց ֆինական ՀԻԿ-ը, որը ոչ-ոքի (1-1) խաղաց Տաջիկստանի «Վախշի» հետ: Քառորդ եզրափակիչում «Ակտոբեն» կհանդիպի Բելառուսի «Դնեպրի» հետ, որը 1-2 հաշվով պարտվեց «Ռուբինին»: Վերջինս կմրցի ՀԻԿ-ի հետ:

Շարապովան դուրս մնաց պայքարից

Մելբուռնում մեկնարկել է թենիսի Ավստրալիայի բաց առաջնությունը: Ցավոք, վնասվածքի պատճառով «Մեծ սաղավարտի» առաջին մրցաշարին չի մասնակցում Դավիթ Նալբանդյանը, որն արդեն 8 ամիս կորած դուրս չի եկել:

Ավստրալիայում տեղացող անձրեւները խանգարում են մրցախաղերի նորմալ ընթացքին: Շատ հանդիպումներ կազմակերպիչները ստիպված են լինում հետաձգել: Փորձառու շատ թենիսիստներ հաջողությամբ հաղթահարեցին առաջին փուլի արգելքը: Եղան նաեւ առանձին անակնկալներ, որոնց շարքին պետք է դասել ռուսաստանցի Մարիա Շարապովայի պարտությունն իր հայրենակցուհի Մարիա Կիրիլենկոյից (6-7, 6-3, 4-6):

Առաջին փուլը հաջողությամբ հաղթահարեցին Ուիլյամս քույրերը: Սերենան 6-1, 6-2 հաշվով հաղթեց Ուրսուլա Ռադվանսկային, իսկ Վինուսը պարտության մատնեց Լյուսի Շաֆարժովային (6-2, 6-2): Պայքարը շարունակում են նաեւ Աննա Իվանովիչը, Ելենա Դեմենտեւան, Ժյուստին Էնենը, Ալիսա Կլեյբանովան, Կիմ Կլիյստերսը, Նադեժդա Պետրովան, Դինարա Սաֆինան:

Տղամարդկանց մրցաշարում Ռոջեր Ֆեդերերը բավական դժվարին հաղթանակ տոնեց Իգոր Անդրեեւի նկատմամբ: Մրցախաղում չորս խաղափուլ անցկացվեց: Ռաֆայել Նադալն էլ 3 խաղափուլում հաղթեց Լուժակին: Հաջորդ փուլի ուղեգիր նվաճածների թվում են նաեւ Մարկոս Բագդատիսը, Դավիթ Ֆերերը, Նիկոլայ Դավիդենկոն, Էնդի Ռոդիկը, Թոմաշ Բերդիխը, Իգոր Կունիցինը:

Անհաջողությունն ուրախացրել է թիմերի մարզիչներին

Աֆրիկայի գավաթի խաղարկությունում նախնական փուլի հանդիպումներն առաջինն ավարտեցին «A» խմբում ընդգրկված հավաքականները: Անգոլայի եւ Ալժիրի հավաքականները կշարունակեն պայքարը պատվավոր մրցանակի համար: Նրանց միջեւ կայացած խաղն ավարտվեց ոչ-ոքի (0-0), ինչը ձեռնտու էր երկուսի համար էլ: Իսկ ահա Մալիի եւ Մալավիի հավաքականները ստիպված են վերադառնալ հայրենիք: Նրանց միջեւ կայացած խաղում Մալիի ֆուտբոլիստները 3-1 հաշվով պարտության մատնեցին մրցակցին: Այս հավաքականների անհաջողությունն ուրախացրել է եվրոպական չորս թիմերի՝ «Յուվենտուսի», «Ռեալի», «Բարսելոնի» եւ «Սեւիլիայի» մարզիչներին, քանի որ նրանց խաղացողներ Մոհամեդ Սիսոկոն, Մամադու Դիարան, Սեյդու Կեյտան եւ Ֆրեդերիկ Կանուտեն ժամկետից շուտ վերադառնում են իրենց տրամադրության տակ: Ընդ որում բացառությամբ Կեյտայի, մյուսներն իրենց ունակությունները չդրսեւորեցին: Իսկ Կեյտան խփելով 3 գոլ, անգոլացի Ֆլավիու Ամադուի հետ գլխավորում է մրցաշարի լավագույն ռմբարկուների ցանկը:

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Վահան Ջուհարյանը վերադարձավ պատվո պատվանդան

Մայրաքաղաքի «Կիլիկիա» մարզասրահում իրենց մրցավեճն ավարտեցին հունահռոմեական ոճի ըմբիշները, որոնք վիճարկում էին հանրապետության չեմպիոնի տիտղոսը: Մրցագորգ էին դուրս եկել 98 ըմբիշներ, որոնք առաջնության մեդալները վիճարկեցին քաշային 7 կարգերում:

Բացի ուժեղագույններին որոշելուց, մրցաշարը նպատակ էր հետապնդում ի հայտ բերել նաեւ հավաքականի անդամներին, որոնք Հայաստանը պետք է ներկայացնեն փետրվարին Երեւանում կայանալիք հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի գավաթի խաղարկությունում:

Հավաքականի գլխավոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանը նպատակահարմար էր գտել, որ Յուրի Պատրիկեեւը (գերծանր քաշ), Ռոման Ամոյանը (55 կգ), Արսեն Ջուլֆալակյանը (74 կգ) չմասնակցեն առաջնությանը, այլ իրենց ողջ ուժերը կենտրոնացնեն աշխարհի գավաթի խաղարկության նախապատրաստությանը: Նրանք մեր հավաքականի առաջատարներն են եւ իրենց հաստատուն տեղն ունեն Հայաստանի ընտրանում:

Նրանց բացակայությունը թույլ տվեց առաջնությունում իրենց դրսեւորել երիտասարդ ըմբիշներին:

Մինչեւ 55 կգ քաշային կարգում Հայաստանի չեմպիոնի տիտղոսին արժանացավ Հարություն Հովհաննիսյանը՝ եզրափակիչում պարտության մատնելով Շավիղ Գեւորգյանին: Մինչեւ 74 կգ քաշայինների մրցավեճում հաղթող ճանաչվեց Վարշամ Բորանյանը՝ առավելության հասնելով Էդվարդ Սարգսյանի նկատմամբ: Գերծանր քաշային կարգում ընդամենը 5 ըմբիշ էր հայտավորված, ուստի նրանք ուժեղագույնին որոշեցին շրջանաձեւ մրցակարգով: Այստեղ լավագույնը Վաչիկ Եղիազարյանն էր:

Տեւական ընդմիջումից հետո ՀՀ առաջնությանը մասնակցեց եւ մինչեւ 60 կգ քաշային կարգում կրկին չեմպիոն հռչակվեց 2005-ի Եվրոպայի չեմպիոն, 32-ամյա Վահան Ջուհարյանը: Փորձառուներից իր բարձրության վրա էր նաեւ Հայաստանի դրոշի ներքո հանդես եկող Դենիս Ֆորովը (84 կգ), որը եւս չեմպիոն հռչակվեց, իսկ մինչեւ 96 կգ քաշայինների մրցավեճում հաղթող դարձավ Սարգիս Տոնոյանը:

Շիրովի գերազանց մեկնարկը

Վեյք Ան Ջեեի շախմատի մրցաշարի 3-րդ տուրում Վարուժան Հակոբյանը սեւերով 33-րդ քայլին հաշտություն կնքեց Ուեսլի Սոյի հետ: 3 տուրից հետո հայ շախմատիստը 1 միավորով հետնապահների թվում է: Ինչպես երեւում է, աշխարհի թիմային առաջնությունում ԱՄՆ-ի հավաքականի կազմում ելույթները Վարուժանից շատ ուժեր են խլել:

«B» խմբի մրցաշարային աղյուսակը 2,5-ական միավորով գլխավորում են չինացի Նի Հուան եւ հոլանդացի Անիշ Գիրին: Նի Հուան հաղթեց Թոմի Նյուբակին, իսկ Գիրին ոչ-ոքի խաղաց Դմիտրի Ռեյնդերմանի հետ: 2 միավորով առաջատարներին հետապնդում է Արկադի Նայդիչը, որը հաշտություն կնքեց Պարամարջան Նեգիի հետ:

Ուժեղագույնների մրցաշարում առաջատարի դերը պահպանեց Իսպանիայում բնակվող Ալեքսեյ Շիրովը, որը 3-րդ տուրում պարտության մատնեց Սերգեյ Տիվյակովին: Շիրովը պարզապես հիանալի է մեկնարկել՝ տոնելով 3 անընդմեջ հաղթանակ: Իսկ ահա Վլադիմիր Կրամնիկն ու աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդը խաղաղասիրաբար են տրամադրված՝ բոլոր պարտիաներն ավարտելով ոչ-ոքի: Կրամնիկը հաշտություն կնքեց իտալացի Ֆաբիանո Կարուանայի հետ, իսկ Անանդը ոչ-ոքի խաղաց կուբացի Լենիեր Դոմինգեսի հետ:

Հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկը՝ Մագնուս Կառլսենը բավական հաջող է խաղում: Նա 2,5 միավորով Հիկարու Նակամուրայի հետ հեշտությունը է Շիրովին: Երկուսի համար էլ 3-րդ տուրը հաջող էր: Կառլսենը հաղթեց Լյուկ վան Վելիին, Նակամուրան առավելության հասավ Նայջել Շորթի նկատմամբ: Հաղթանակ տոնեց նաեւ Վասիլի Իվանչուկը՝ պարտության մատնելով Յան Սմիթսին: Իվանչուկը 2 միավորով 4-րդ տեղում է: Պետեր Լեկոյի եւ Սերգեյ Կարյակինի մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի:

Պատանիները սկսում են նախապատրաստությունը

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականը սկսում է նախապատրաստությունն աշնանը կայանալիք Եվրոպայի պատանեկան առաջնության ընտրական մրցաշարին: Հունվարի 20-30-ը պատանի ֆուտբոլիստները գլխավոր մարզիչ Սուրեն Չախալյանի գլխավորությամբ ուսումնամարզական հավաք կանցկացնեն «Ռեժինե» հյուրանոցում: Հավաքականը կմարզվի հավաքական թիմերի տեխնիկական կենտրոնի խաղադաշտում:

Հավաքին կմասնակցի 23 ֆուտբոլիստ: Նրանցից մեկը՝ Ալբերտ Ամիրխանյանը հոլանդական «Հելմոնդ սպորտ» թիմի պատանեկան կազմից է: Հավաքականում ընդգրկված են նաեւ «Փյունիկի», «Բանանցի» եւ «Իմպուլսի» ֆուտբոլիստները:

ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը հունվարի 19-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, հաստատեց «Արժեթղթերը հանձնելու առաջարկի հայտարարագրի կազմը, առաջարկի եւ դրա պայմանների փոփոխությունների հրապարակման կարգը, առաջարկի շուկայական գնի հաշվարկման կարգը, արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի իրականացման կարգն արժեթղթերի կարգավորվող շուկայում առեւտրի թույլտվության դադարեցման դեպքում, արժեթղթերը հանձնելու առաջարկն ընդունելու կամ մերժելու մասին ցանկացած հրապարակային առաջարկության կամ խորհրդի կարգը» կանոնակարգ 4/10-ը: Լրացումներ եւ փոփոխություններ կատարվեցին «Ազդագիր եւ հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ում:

Խորհուրդը որոշեց հաշվառել «Մեգա Պանտերա» ՍՊԸ դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպության թվով 30 մասնաճյուղերը:

Գրանցվել է բանկի նոր մասնաճյուղ

Կենտրոնական բանկի նախագահի հունվարի 19-ի թիվ 1/17 Ա որոշման համաձայն գրանցվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ մասնաճյուղը:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

AZG NEW PDF.qxd 1/19/2010 10:15 PM Page 1

10/7.15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
3 հուլիսի 2009 թվականի N Մ- 433 -Ա
քաղ. Երևան

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2009 թվականի հունիսի 24-ի N 3.8-2/1595-09, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2009 թվականի հունիսի 22-ի N Ե2009-6141 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2009 թվականի հունիսի 24-ի N 14740/3-6 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ուղարկված կոշիկների (Croc Shoes) (58 տեղ, 1858 կգ քաշով, 60960 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7710 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, Արարատյան Տ/Մ) ներմուծման ու անհատույց բաշխման ծրագիրը:

2. Առաջարկել «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ին բեռը ստանալուց և բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Գ. Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» անունով ուղարկված 58 տեղ 1858 կգ քաշով և 60.960.00 ԱՄՆ դոլար արժողությամբ / ճանապարհածախսը 7.710 ԱՄՆ դոլար/ բեռի բաշխման

Ց Ա Ն Կ Ը

հ/հ	Ապրանքի անվանումը	Տեղ	Արժեք $	ՀՀ սոցապ նախարարություն	ԼՂՀ Ստեփանակերտի «Արփենե» մայր և նորածին կենտրոն ԲԿ	ԼՂՀ Քաշաթաղի շրջ.սոցապ վարչություն
1.	Կոշիկներ (Croc Shoes)	58	60.960	10	33	15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
6 նոյեմբեր 2009 թվականի N Մ- 762 -Ա
քաղ. Երևան

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔԵՐԻ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2009 թվականի հոկտեմբերի 19-ի N3/3.8-2/2842-09 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2009 թվականի նոյեմբերի 2-ի N 28126/3-6 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Բարեգործական որակել «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի հասցեով մարդասիրական օգնության կարգով ԱՄՆ-ից Միացյալ հայկական հիմնադրամի կողմից ուղարկված բեռի (263 տեղ 2079.25 կգ ընդհանուր քաշով, 67.399 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7090 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկը կցվում է, Արարատյան Տ/Մ) ներմուծման ծրագիրը:

2. Առաջարկել «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամին նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ- ՍԻՄՈՆՅԱՆ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» անունով ԱՄՆ-ից ուղարկված 263 տեղ, 2079,25 կգ բրուտտո քաշով և $67,399 արժողությամբ /ճանապարհածախսը $ 7 090,00/ բեռի Բաշխման ցանկը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	բանկերի ընտ.համար միավորվել	ընդհանուր քաշը բրուտտո կգ	մաքուր քաշը նետտո կգ	տեղերի քանակը	ծագման երկիրը	արժեքը	«Հայ կրթական հիմնադրություն» ՀՀ մնաբաժին	«Վիրենա» մայր և նորածին ԲԿ ԼՂՀ Ք.Ստեփանակերտ	ԼՂՀ պաշտպանության նախարարություն	«Գ.Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտ.հիմնադրամ»	ԼՂՀ Քաշաթաղի շրջանի սոցսաս վարչություն	«Մեր տունը» ՀԿ Ք.Էջմիածին	«Օրրան» ԲՀԿ
1	Հագուստ Օգտագործված		1670	1429	235	ԱՄՆ	56629	33	81			100	3	18
2	Ամվասայլակ	3	89	74	3	ԱՄՆ	2500			3				
3	Հենակ	14	28.25	23, 5	2	ԱՄՆ	1200			14				
4	Միջադիր կանացի	66 փ.	29	26	4	ԱՄՆ	150		52փ.				14փ.	
5	Մեծահասակի տակդիր	11	14	13	1	ԱՄՆ	80							11
6	Անկողնու տակնաշոր		117	107	10	ԱՄՆ	5000			10				
7	Աքսեսուար/պայուսակ օգտ./	15	19	18	1	ԱՄՆ	500					15հ.		
8	Անկողնու պարագաներ /սավան, ծածկոց/		75	70	5	ԱՄՆ	750					5		
9	Խնամքի պարագաներ /խոնավ անձեռոցիկ/	16	7	6,5	1	ԱՄՆ	50		16հ.					
10	Տոնածառ օգտագործ.	1	11	10	1	ԱՄՆ	200					1		
11	Ավտոմեքենայի ալյումինե անվահեծեր	2	16	16		ԱՄՆ	300				2			
12	Ավտոմեքենայի ռետինե ուղեգորգ	1կոմպլ.	4	4		ԱՄՆ	40				1կոմպլ.			
	Ընդհամենը		2079,25	1797	263		67399							

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 սեպտեմբերի 2009 թվականի N Մ- 601 -Ա
քաղ. Երևան

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔԵՐԻ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2009 թվականի սեպտեմբերի 8-ի N 3/2368-09, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2009 թվականի սեպտեմբերի 4-ի N Ե2009-8505 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2009 թվականի սեպտեմբերի 7-ի N 21982/3-6 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի հասցեով ուղարկված հանրակացարանային կահույքի (226 կտոր, 5866 կգ քաշով, 49214 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7600 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, Արարատյան Տ/Մ) ներմուծման ու անհատույց բաշխման ծրագիրը:

2. Առաջարկել «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամին բեռն ստանալուց և բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Գ. Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի»անունով ուղարկված 226 տեղ՝12932LBS /5866կգ /քաշով, 49,214.00 ԱՄՆ դոլար արժողությամբ, ճանապարհածախսը՝ 7,600.00 ԱՄՆ դոլար արժողությամբ բեռի բաշխման

Ց Ա Ն Կ Ը

հ/հ	Ապրանքի անվանումը	Տեղ	1-ի Քաշը LBS	Ընդհանուր Քաշը LBS	Արժեքը $	Ընդհանուր Արժեքը $	ԼՂՀ Քաշաթաղի շրջ.սոցսաս վարչություն
1.	Մահճակալի կաղակաս	52	45	2340	110.00	5720.00	52
2.	Մահճակալի զսպանակ	52	35	1820	150.00	7800.00	52
3.	Աթոռ, գրասեղան	20	30	600	264.00	5280.00	20
4.	Ուսանողական անհատ. գրասեղան	16	139	2224	455.00	7280.00	16
5.	Հանրակաց. փոքր զգեստապահարան	6	60	360	239.00	1434.00	6
6.	Մահճակալի տակի զգեստապահարան	20	20	400	75.00	1500.00	20
7.	Հանրակաց. ննջարկակ	52	69	3588	300.00	15600.00	52
8.	Հանրակաց. զգեստապահարան	8	200	1600	575.00	4600.00	8
9.	ԸՆԴԱՄԵՆԸ	226		12932.00		49214.00	

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության ախտաբանական դատախազների սպասարկման եւ արարողակարգի վարչության առաջատար մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի
/Հայաստանի Հանրապետության դատախազության ախտաբանական/

ՀՀ դատախազության ախտաբանական/մոլեկուլային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

Դատախազների, ախտաբանական/մոլեկուլային ծառայության ղեկավարի եւ վարչության պետի հանձնարարությամբ անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, նախապատրաստվող փաստաթղթերի նախագծերի մասնակցությունը ախտաբանական/մոլեկուլային ուսումնասիրությունների մասնակցելը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

ՀՀ դատախազության ախտաբանական/մոլեկուլային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ ախտաբանական/մոլեկուլային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

ա) բարձրագույն իրավաբանական կամ այլ մասնագիտական բարձրագույն կրթություն, բ) դատախազական (պետական) ծառայության պաշտոններում 2 տարվա սաժ կամ դատախազական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ 3 տարվա մասնագիտական ախտաբանական/մոլեկուլային սաժ կամ վերջին 3 տարվա ընթացքում հաղորդական կամ հայեցողական կամ հաղորդական պաշտոններում առնվազն մեկ տարվա ախտաբանական/մոլեկուլային սաժ, գ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, դ) անհրաժեշտ գիտելիքներ եւ տեղեկատվություն իր սպասարկման բնագավառի մասին, ե) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով ախտաբանական/մոլեկուլային ունակություն, զրական հայերենի պատշաճ իմացություն, առնվազն մեկ օտար լեզվի տիրապետում:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 02 փետրվարի 2010թ.:

Մրցույթն անցկացվելու է 2010թ. փետրվարի 19-ին ժամը 11.00-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Կ.Սարգսյան 5/:

Մրցույթի նախապատրաստական ախտաբանական/մոլեկուլային աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Կ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/:

19.01.2010թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության ախտաբանական/մոլեկուլային Արարատի մարզի դատախազության տարածքային բաժնի գլխավոր մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի
/Հայաստանի Հանրապետության դատախազության ախտաբանական/մոլեկուլային/

ՀՀ դատախազության ախտաբանական/մոլեկուլային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

Բաժնի ախտաբանական/մոլեկուլային վերաբերյալ մարզի դատախազի նախապատրաստած ցուցումների ու այլ փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների եւ ուղեցույցների մշակումը, դրանց վերաբերյալ եզրակացություններ տալը, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, նախապատրաստվող փաստաթղթերի նախագծերի մշակման ախտաբանական/մոլեկուլային մասնակցելը, փաստաթղթաշրջանառության վարման ախտաբանական/մոլեկուլային մասնակցելը, առաջարկություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր եւ այլ գրություններ նախապատրաստելը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

ՀՀ դատախազության ախտաբանական/մոլեկուլային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ ախտաբանական/մոլեկուլային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

ա) բարձրագույն իրավաբանական կամ այլ մասնագիտական բարձրագույն կրթություն, բ) դատախազական (պետական) ծառայության պաշտոններում 2 տարվա սաժ կամ դատախազական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ 3 տարվա մասնագիտական ախտաբանական/մոլեկուլային սաժ կամ վերջին 3 տարվա ընթացքում հաղորդական կամ հայեցողական կամ հաղորդական պաշտոններում առնվազն 1 տարվա ախտաբանական/մոլեկուլային սաժ, գ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, դ) անհրաժեշտ գիտելիքներ եւ տեղեկատվություն իր սպասարկման բնագավառի մասին, ե) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով ախտաբանական/մոլեկուլային ունակություն, զրական հայերենի պատշաճ իմացություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 02 փետրվարի 2010թ. :

Մրցույթն անցկացվելու է 2010թ. փետրվարի 19-ին ժամը 11.00-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Կ.Սարգսյան 5/:

Մրցույթի նախապատրաստական ախտաբանական/մոլեկուլային աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Կ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/:

19.01.2010թ.

www. azg.am

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 19.01.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: